# ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖՈԼԿԼՈՐԸ

891·99
Հ-25

1 9 NOV 2017

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՑԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՅԵՐԵՎԱՆ—1936

891.99
Հ-25

# ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖՈԼԿԼՈՐԸ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

05.06.2013

37847

Պատ. խմբագիր Ս. Կարապետյան
Տեխ. խմբագիր [redacted]
Սրբագրիչ Ռ. Տո[illegible]ան

—

Կազմի, տիտղոսաթերթի յեվ ցմուց-տիտուլների նկարները Տարագրոսի

—

Գիրքը շարված, տպագրված, կազմված յեվ կլիշեները պատրաստված են Պետական Համալսարանի Հրատարակչության տպարանում, Տերյան 68.

—

2543
38

## ԱՌԱՋԱԲԱՆ

Նախկին Կուլտուրայի Պատմության ու ներկայիս Պատմության և Գրականության Ինստիտուտներում բույն դրած և տարիներ շարունակ իրենց սև գործը կատարող ժողովրդի մերկացված թշնամիները քիչ վնաս չեն հասցրել նաև ժողովրդական ստեղծագործության, մանավանդ՝ հայկական խորհրդային ֆոլկլորի հավաքման և ուսումնասիրության բնագավառում։ Հենց միայն այն փաստը, վոր մինչև որս հրապարակի վրա չկա ժամանակակից հայկական ֆոլկլորին նվիրված վոչ մի ամփոփ ժողովածու, ժողովրդի թշնամիների այդ վնասարարության պերճախոս ապացույցն է։

Մեր ընթերցող մասսան, հաճախ, ժամանակակից հայ ժողովրդական ստեղծագործության նմուշներին առաջին անգամ ծանոթանում է վոչ թե բնագրերի միջոցով, այլ թարգմանություններից։ Վորքան էլ տարօրինակ, բայց փաստ է այն, վոր այս րոպեյին հայկական խորհրդային ֆոլկլորի լավագույն նմուշներն արդեն դարձել են ռուս ընթերցողի սեփականություն (տես „Творчество народов СССР" հոյակապ հատորը), իսկ հայ բանվորն ու կոլտնտեսական գյուղացին տակավին չունեն իրենց ձեռքի տակ՝ իրենց իսկ ծոցից դուրս յեկած ժողովրդական անանուն յերգիչների, գյուղական ինքնուս բանաստեղծների ու աշուղների լավագույն ստեղծագործությունները՝ ամբողջ աշխարհի պրոլետարիատի հանճարեղ առաջնորդներ Լենինի և Ստալինի, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության, քաղաքացիական կռիվների, կոլտնտեսական ուրախ ու յերջանիկ կյանքի, սոցիալիստական շինարարության այլ և այլ բնագավառների (էլեկտրիֆիկացիա, քաղաքային շինարարություն և այլն), նոր կենցաղի և այլնի մասին։

Այդ անհանդուրժելի դրությանը վերջ տալու և ընթերցող մասսաներին հայկական խորհրդային ֆոլկլորի մի շարք նմուշներին ծանոթացնելու նպատակով՝ Պատմ. և Գր. Ինստիտուտը հրա-

տարականության և հանձնում ներկա ժողովածուն, միաժամանակ ձեռնարկելով նոր նյութերի հավաքման գործին։

* * *

«Հայկական խորհրդային ֆոլկլորը» ժողովածուի նյութերը հավաքագրել և Ինստիտուտի աշխատակից, բանահավաք Գ. Թարվերդյանը, Ինստիտուտի կողմից հատկապես այդ նպատակով պարբերաբար գործուղվելով Հայկական ԽՍ Հանրապետության մի շարք շրջաններ (Ղամարլու, Վաղարշապատ, Աշտարակ, Կոտայք, Ախտա, Նոր-Բայազետ, Դիլիջան և այլն)։

Նյութերն ընտրել, դասավորել, ծանոթագրել (բանահավաքի գրավոր վկայությունների հիման վրա), բառարանը կազմել և մասնագիտական խմբագրությունը կատարել և Ինստիտուտի գիտ. աշխատակից Ա. Ղանալանյանը։

Յերգերի վերնագրերը դրել են մասամբ իրենք՝ ժողովրդական յերգիչներն ու աշուղները, մասամբ էլ՝ բանահավաքը, նյութը գրանցելիս։

Պատմության յեվ Գրականության Ինստիտուտ

17 հունվարի 1938 թ.

Յերեվան.



# Լ Ե Ն Ի Ն

# ԼԵ՛ՆԻ՛Ն ՓԱՌՔ

ՆԱՂԸԼ

1

Էն վո՞վ է, վուր ժողովուրթին կը պախի.
Էն վո՞վ է, վուր ըռըշպարաց քօմագ է.
Էն վո՞վ է, վուր ֆահլաքանրաց խամխար է—
Էնիկ մեկ փաշե մ՚ է, անուն ուր Լենին։

2

Մասսար ըմ կեր, անուն ուր մալշուրիկ.
Լենին անունց գինրաշին է.
Վայ անունց խետ է, զուր մալ կես կ՚ենի խըտ ուրիշաց.
Մալշուրիկ, գավա՝ ըղմալ էնա ժողովրթի խամխար։

3

Հախշըրի մալ, ղովլաթ, գա ղըմմեն մոտ զանգինաց.
Կայք, ղըկարողութեն, գա ղըմմեն մոտ զանգինաց.
Վուսկի, ղըմուլք, գա ղըմմեն մոտ զանգինաց.
Ցագիրն է, ըզուր երկու տարանկ ծեռնիր...

Զանգին կ՚ուտի յեղ ը մեղր, նատի ըզուր ուզեն.
Հախկատ չունի ուրան ղըգարեխայ, չոլթան.
Զանգին տըփի նոքըրու կլխուն, անել տա ըզուր պան,
Հախկատ չարչրվի, չալըշի, չար տաս կա ուր ջան։

Զանգինաց ը սուլթանաց խոսկ մեկ է.
Ամմա ղ՚արի վուր, անունք քիչ են, հախկատ շատ է.

Քիչ գըշտա կը տանջա, զանու նօֆ կ՚ուտի.
Միլահ ը կուժվաթ օնու ծեռին ի։

4

Տօնակ վօսկոռաց խասեր ի չխօ…
Լօնին փաշեն հօխկտի մ՚ տղե մ՝ եր.
Ենիկ թռավ ըղուր սուլթան ը հօքմաթի հիլես.
—Յես տը կըվիմ, ասից, տ՚ազատիմ զհօխկտա…

5

Հուքմօթ եր, քօշից ուր զուրք ը զուրօպլի.
Ջօնգիյքտիր տըին ուրանց խօր ը խօզնեն.
Բօգիր, օղանիր չխօ խասին քօմօգ.
Աստունք օմեն քշին, յերիշ երին դըխ Լօնին փաշեն։

6

Լօնին փաշեն եր, կանչից ըղուր հօխկտա-
Փուղօրաքտիր.
Կանչից քօսըր, պօնվօր, խեխճ խղմօթքօրքիր.
Հինչքան կին օտպլսին, թօփին Լօնին փաշին քօմօգ.
Փօտ ը փօտօտ, չօք ը զօգնօգ առած զօրանց սիլօհ։

7

Ըսխտին Լօնին փաշեն խեծօվ ուր ձին, քըշից.
Ըստալին փաշեն խեծօվ ուր ձին, քըշից.
Կլիմ փաշեն խեծօվ ուր ձին, քըշից.
Սերգո փաշեն խեծօվ ուր ձին, քըշից.
Կիրով փաշեն խեծօվ ուր ձին, քըշից.
Կալինին փաշեն խեծօվ ուր ձին, քըշից.
Շահումյան փաշեն խեծօվ ուր ձին, քըշից.
Միկոյան փաշեն խեծօվ ուր ձին, քըշից.
Ղուկօս փաշեն խեծօվ ուր ձին, քըշից.
Քօմկից լե զու երին Փօղիրաց որդուն։



8

Հօքմաթ եր, խըտ ջօնգինաց առան, եկան ուրանց զուրք.
Խօմխարքիր առան, եկան ուրանց զուրք.
Ձխո Ինգլիզ առավ, եկավ ուրան զուրք.
Ֆռանգսըզ առավ, եկավ ուրան զուրք.
Ամրքյան առավ, եկավ ուրան զուրք.
Ճայփուն առավ, եկավ ուրան զուրք.
Չին-Մօչին առավ, եկավ ուրան զուրք.
Մսըր-Հիսար առան, եկան ուրանց զուրք.
Ոսման-Տաճիկ առավ, եկավ ուրան զուրք.
Աջամ-Պարսիկ առավ, եկավ ուրան զուրք.
Հօբօշ-Ալման առան, եկան ուրանց զուրք։
Աստունք ջըմմեն տը ծեծկվին խըտ Լօնին փաշին։

9

Ջօնգինաց զուրքի մե ղըամ եր՝ փարով վօրցկան.
Ջօնգինաց զուրքի մե ղըամ եր՝ շուխ պօխված.
Ջօնգինաց զուրքի մե ղըամ եր՝ վօխկուտ-ջօնպախ.
Մե ղըամ լե ուտար, օնծանութ մարթեր։

Են վուր փարով եր եկի, ըղուր կլօխ կը պօխեր.
Են վուր շուխ պախված եր, ըղուր կլօխ կը ծօծկեր.
Են վուր վօխկուտ-ջօնպախ եր, կը վախեր, կը փախեր,
Մացեր ին ուտար մարթեր, վուր ուրանց վեջ չեր։

10

Են վուր Լօնին փաշի մարթեր ին, մեկ սիրտ, մեկ խօքի.
Ջըմմեն ել զըրկված պօնվուրքիր ին հօխկատ.
Ջըմմեն ել զըրկված ըռշպօրքիր ին հօխկատ.
Ջըմմեն ել զըրկված, օնկուռծ, խեխճ, հօխկատ,
Հախշըրի զուրկ, սիրտը վօռված մարթեր…

## 11

Զուրք ը ըռհաթ գօրկլին-գօրկվան խըտ իրար.
Ծեծին-ծեծկվան խըտ իրար.
—Ե՜յ, վրեժի կօխ ի, կանչից Լօնին փաշեն.
Զօրկեք, ծե դուշման փուչ երեք.
Կովեք, ծե ապատութեն ծեռք պերեք:

—Ե՜յ, կանչից թաքօվուր-սուլթան ուր զորաց.
Զօրկեք ետա չփլախ-չփլուխ նախիրաց.
Վըն շատ կոտրի, օնու կը տամ գըխաչ ը մինդալ.
Բօղցածնիրաց ետա խօժան կ՚ուզա խըկ՝
Ձիմ թուր ը թօջ, զիմ թօքօվորութեն...

Զօրկլին, ծեծկվան լուսուն չօր ի եվար.
Զորաց մեչ ինչքօն կին պօնվուրքիր,
Զորաց մեչ ինչքօն կին ըռըշպօրքիր,
Աւին.—Մենք վրե՞ գօնինք մեր ֆօղիր օխպրանց.
Պուլուր փօխին, օնցին դըխ Լօնին փաշեն:

## 12

Զօրկլին, ծեծկվան լուսուն չուր ի եվար.
Զօնունք ունին գըթոփ ը գօմրօրա,
Ատունք՝ քօնի մ՚ փշավ ը գօրաբինա.
Զօնունք ունին մոսին, մօուսին հրացան,
Ատունք՝ պօխ ը յեղան, գօգօնագ.
Զօնունք՝ գըպուլըմիտ, չօրխ ի ֆօլօք,
Ատունք՝ վօրուց, չօքըջ, փոցխ ը կերանթի...

Ե՜յ,—կանչից Լօնին փաշեն,
Խեծավ ուր ձին, քըշից հօուեչ.
Մինչև յե՞փ, օսավ, ըզմե օրուն ծըծիք.
Մինչև յե՞փ, օսավ, ետա հօխչար գավթիք.
Մինչև յե՞փ, օսավ, մե իրօվունք խլիք,
Մինչև յե՞փ, օսավ, հօխչար տիրապետիք...



Ասավ, քըշից հօուեչ՝ ըզուր կօրմիր բօյրաղ պռնած.
Անու ետևեն պօնվուր կնօց խօզօր-խօզօր.
Անու ետևեն ըռշպօր կնօց խօզօր-խօզօր.
Անու ետևեն սօնիյաթքօր կնօց խօզօր-խօզօր.
Անու ետևեն օնսուն, քօղցած խօզօր-խօզօր.
Անու ետևեն օնկուռծ, յեսիր խօզօր-խօզօր.
Անու ետևեն օնխուղ-օնճուր խօզօր-խօզօր...

Պռնին գօշխար, գըսար, գըքօր գըմմեն դեխեն.
Պռնին ծօրիր, քօր, գըկապան գըմմեն դեխեն.
Պռնին գետիր, մերի, չընգըլ գըմմեն դեխեն.
Պռնին տօշտիր, գօռա ը պօխից գըմմեն դեխեն.
Պռնին օրուտ, չօյիր-չիմօն գըմմեն դեխեն.
Պռնին գըծավ, հօխպուր, որման գըմմեն դեխեն...

Զօրկլին, գօրկվան, դուման ելավ, հօխչար պռնից.
Զօրկլին, գօրկվան, լեշը փավավ, տօպակ-տօպակ.
Ըսպանվողաց օրուն ելավ, կապից գըգետ,
Եվ օրնագետ քօր կլտորեր գըմանաքօշ...
Զօրկլին, գօրկվան՝ մե կողմ հօքմօթ, մե կողմ ըռյօթ.
Զօնունք ունին գըթոփ ը գօլլա, գըղումբօրօ.
Ատունք՝ քանի մ՚ փշավ թվօնք, գօրօբինօ.
Զօնունք ունին մոսին, մօուսին, խըշտ—հրացան,
Ատունք՝ պօխ ը փոցխ ը յեղան, շիշ, կերօնթի.
Զօնունք ունին գըպուլըմիտ, չօրխ ի ֆօլօք,
Ատունք՝ ճպուտ, քօր ը կոփթ, կացին, ուրաք...

Զօրկլին, գօրկվան չուրի կեսոր, արև թեքվից,
Են հօքմօթի զորաց մեչեն հինչքան կին,
Են վուր փօրով եր եկի, ըզուր կլօխ կը պախեր.
Են վուր շուխ պօխված եր, ըզուր կլօխ կը ծածկեր.
Են վուր վօխկուտ-ջօնպախ եր, վախեր, կը փախեր.
Մացեր ին ոտար մարթեր, վուր ուրանց վեջ չեր:

13

Կեսոր թեքվից, Լօ̈նին փաշի զուրքը նեզվից...
Ի՞նչ տը օ̈ներ փետ զըփօ̈տօ̈տ զըթոփու տեմ.
Ի՞նչ տը օ̈ներ կացին, մանգաղ թվանքի տեմ...
Լօ̈նին փաշեն խօ̈բօ̈ր երեց՝ քօ̈մագ ուզեց.
Լօ̈նին փաշեն հօ̈վար եցկից, խօ̈մխօ̈ր ուզեց.
Խօ̈մխօ̈ր, քօ̈մագ թօ̈փան, եկան չորս դեխերաց.
Եկան, խօ̈սան, սև պօ̈նվորքիր խօ̈զօ̈ր-խօ̈զօ̈ր.
Անունց ետվեն ըըշպօ̈րքիր խօ̈զօ̈ր-խօ̈զօ̈ր.
Անունց ետվեն սօ̈նիյաթքօ̈րնիր խօ̈զօ̈ր-խօ̈զօ̈ր.
Անունց ետվեն լութ-քօ̈ղցածնիր խօ̈զօ̈ր-խօ̈զօ̈ր.
Անունց ետվեն օ̈նխուղ-օ̈նճուր խօ̈զօ̈ր-խօ̈զօ̈ր...

Քօ̈մագ եկավ, Լօ̈նին փաշի կուղմ զորացավ.
Հօ̈քմաթաց կուղմ թուլցավ, խոքնավ...

14

Ջօ̈րկին, զօ̈րկվան, զուման եկավ հօ̈խշար պռնից.
Ջօ̈րկին, զօ̈րկվան, լեշը փռվավ տօ̈պակ-տօ̈պակ.
Ըսպանվողաց արուն եկավ, կապեց զըգետ.
Ես օ̈րնագետ քօ̈ր կլտորեր զըմանաքօ̈շ...

Ջօ̈րկին, զօ̈րկվան, Լօ̈նին փաշի զուրքը զռից.
Ջա́ւ քօ̈շիցին, աչքը խփուկ հառեջ վօ̈զին.
Ել չիրիշկին թոփ ը թվանք զըպուլըմիտ.
Դոշով պօ̈ցին ուրանց ճօ̈մփան մըչ են զորաց.
Վուտքի տակ լօ̈շ տօ̈պակ-տօ̈պակ կոխին, օ̈նցան.
Յոթ խատ զարնվեր, ընգներ, մեկը անցներ հօ̈ռեչ.
Ջօ̈մդօ̈ք թափեր քօ̈նց փօ̈յիզու խոխվ-խօ̈զօ̈լ...

Լօ̈նին փաշեն կ՚երթեր հօ̈ռեչ՝ պռնած բայրաղ.
—Հա́յ-հա́յ, տղաք. հօ̈՚ռեչ անցեք, որը մերն ի...
Հօ̈ռեչ օ̈նցավ քօ̈ղցածնիրաց տղուն մեկեն.
Հօ̈քմաթաց զուրք խօ̈ռվավ հիրուր, փախավ ցրիվ...



Լօ̈նին փաշի զուրքը թափավ քօ̈նց զըմուրիխ.
Քօ̈նց ըհարու սել ը սելով գետ վօ̈րօ̈րած.
Քօ̈նց գօ̈լօ̈նի վօ̈րօ̈ր կարկուտ... զի՞նչ պօ̈տուխաս.
Քօ̈նց զըծովու ֆռթունի պես օ̈ռդ ը օ̈սման,
Քօ̈նց սօ̈մ յելի... երկինք կետինք, իրուր խօ̈ռնվան...

Մեկ զիյօ̈մաթ փոթավ զօ̈խշար դպավ իրուր.
Լօ̈նին փաշեն յերիշ երաց, առավ զըմմեն.
Առավ օ̈նունց թոփ ը թվանք, ջօ̈բախանեն.
Առավ օ̈նունց մոսին-մօ̈ռտին զըզումբարեն.
Առավ օ̈նունց զըպուլըմիտ, չարխ ի ֆօ̈լօ̈ք.
Տվից, ցրվից, քանդից, փռից մեկ հօ̈խշըրքով...

15

Հօ̈քմաթաց զուրք վուր մեկն ընգավ, վուր մեկ փօ̈խավ.
Մըչ հօ̈խշըրին կորա́ն, կօ̈ցին, թողեր կորավ.
Հօ̈քմաթրաշի, ենա ըռօ̈ց ճոչ սուլթանին,
Ջըռ դօ̈նդօ̈լօշ ը պօ̈ց պերան ենա ծօ̈րին.
Սաղ-սալամաթ պռնին քօ̈շին մոտ Լօ̈նինուն։

Լօ̈նին ասավ.—Պիյան-սօ̈րսաղ, եա ի՞նչ երիր.
Քօ̈ ի՞նչ պօ̈ն ի կառավարել մըչ հօ̈խշըրին։
Ենա ծօ̈ր, թե.—Ցես քօ̈ վոտաց մեռնիմ, Լօ̈նին,
Մի՛ սպանիր, հեյրան իմ քե, ձի խնայիր.
Կտոր ըմ խող տու ցանիմ զավուն, ըլնեմ բոստանչի,
Քօ̈ սօ̈ղաղին, խետ իմ խիզնանց ապրինք մինչի...
—Ցես չըմ խափվի, եառ շողոմ խոսքերտ իթօ̈րդ.
Ասեց Լօ̈նին, քաշեց զըսուր կլօ̈խն իզօ̈րկ...
Կլոխն իզօ̈րկ, ջօ̈մդօ̈ք թալից ենա քօ̈լխան.
Փողաններաց շներն եկան ինչզօ̈դօ̈ր կին,
Քօ̈շին, ենու լօ̈շը երին ծվեն-ծվեն...
Ենու կլօ̈խ զօ̈րկին երկեն մեկ ըռոխմ ծեր,
Առան ուրանց ծեռ, քօ̈նց բօ̈յրաղ պարզիցին վեր.
Հօ̈խշար—օ̈լօ̈մ պտըտցուցին, չօ̈ րի նեխավ,
Եաև քցին մըչ քօ̈լուգին...

16

Սօտկավ գըմշեն, վուր նստեր եր հօխշրի վգին.
Բօնի՛-քօնի՛ մրունքաներ եր երի ենի,
Բօնի՛-քօնի օջախներ եր մարե ենի,
Բօնի՛-քօնի՛ ճժուկներ եր թողե խեխճ-վուրփ,
Բօնի՛-քօնի՛ մերեր-քօրեր սևեր խօքած,
Բօնի՛ ջօհել-ջիվան կնքաիր վօրփեվօրի,
Բօնի՛-քօնի՛ կը մեկըրին մըչ գնգօնայ,
Բօնի՛ կուիվ զըշօմաթա սարքեց ենի,
Գուգեր գախշար-օլօմ գօլթի, իրմով ենի…

17

Լօնին փաշեն մօլշուրեկլի ուրից գօկուն.
Երկրի կարք վերուց, երեց կլոխն ի վեր:
Են տուճկվա գօնգիններաց երից կատու,
Ալից ամեն ինչ ծեռներաց, թողից օնաուն:
Են տուճկվա քօսըրներաց երից փաշա.—
Զըմեն մեկ-մեկ ատօմվուր ին մըչ գիվանին:
Են տուճկվա բեգիր, օղեք շինեց յեսիր.
Զըմեն պունից, կուծից, եսկեց, քշից ներսիր:
Են տուճկվա նոքօր, չորան, ըլխգմօթքօր,
Զըմեն տարավ, ավից հուսը՛մ, ուրից սօրքօր:
Երկիր զըմեն կլօխ եառ պօնվուրքերաց.
Երկիր զըմեն կլօխ եառ ըռըշպօրաց,
Երկիր զըմեն կլօխ եառ խեխճ նոքօրաց:
Ով վուր խեխճ եր, նօչար, քօղցած, տարավ հօւեչ,
Ով գօնգին եր, օղա ու բօգ, ափեց գլխին,
Բշեց, կօցին մամու խուլթուխ, անտօրց մաան,
Յան քօղցած, ծօրավ, գվեցին, վեռչը խօտան:

Երկիր հիատկեց Լօնին փաշեն,
Թողեց զըմեն ուրօն մարթեր.
Հօշխատավուր առից ուր թևի տակ…

Ասել է Գարո Բարցումյան·



2543
38

# ԼԵՆԻՆԻ ՅԵՐԳԸ

Լսե՛ք, պատմեմ իրականից,
Թե ինչը ծով եր Լենինը.
Հասկացող եր ամեն բանից,
Շնորքի ծով եր Լենինը:

Ծով խելքովը աշխարհ չափեց,
Ինչքան ճիգ ու ջանքեր թափեց.
Թշնամին տեսավ, սարսափեց,
Ընկերներով եր Լենինը:

Ընկերներով շա՜տ-շատ տարի,
Աշխատեցին ժիր ու արի.
Մեծ հուքի յեր, խղճով բարի,
Շատ անունով եր Լենինը:

Անունը պայծառ ու մեծ եր,
Լուս տվող կրակ ու բոց եր.
Բարի, մարդասեր, անկեղծ եր,
Եհտիբարով եր Լենինը:

Եհտիբարով, քաջ ղեկավար,
Գտավ բանվորին դեղ ու ճար.
Շատ հոգսեր քաշեց անհամար,
Ինթիզարով եր Լենինը:

Ինթիզարը առավ գործով,
Իմաստուն, խելացի, փորձով.
Սաղ թշնամիքը թափեց ծով,
Զոռ ը գոռով եր Լենինը:

—Զարբըդ զոռ, բանվո՛ր, գեղացի՛,
Ասավ՝ Թեզ արա, միացի,
Բոլոր բանվորին ընկերացի.
Այսպես խոսող եր Լենինը։

Խոսող եր, խոսքերը անգին,
Տուռ տվեց աշխարհը իր հանգին.
Շինելով նորը, քանդեց հին,
Հինը կործանող եր Լենինը։

Կործանեց ուժեղը, չարը,
Վեր քարին չթողեց քարը.
Կտրվեց բուրջույի ճարը,
Խիստ հետեւող եր Լենինը։

Հետեւեց, յերկիրը շինեց,
Անապատները ջուր անցուց.
Ծովը ծովի հետ միացուց,
Բաշ, աշխատող եր Լենինը։

Աշխատողին պարծանք լինի,
Հետեւողներին կյանք լինի,
Նազո՛ւք, խոսքերդ թանգ լինի,
Արժանավոր եր Լենինը։

Ասել է կույր աշուղ Ջյամալ Բեկլարյանը, 33 տարե-
կան, Լենինականի շրջանից. աշուղական անունը—
Նազուկ։



# ԼԵՆԻ՛ՆՈՒ ԽԱՂ

Խեղճ ու նաչար շատ լաց արին,
Նիկոլ[1] ընգավ, աշկ բաց արին.
Եա վո՞ն արեց, եա վո՞ն արեց,—
Եաիկ գըմմեն Լենին արեց։

Պետրոպոլս[2] եկավ լուրը,
Կարթին գիվանխանի դուռը.
Եա վո՞ն արեց, եա վո՞ն արեց,—
Եաիկ գըմմեն Լենին արեց։

Ցավլըներաց ծաթի արև,
Զանգլինքերաց օրըն ի սև.
Եա վո՞ն արեց, եա վո՞ն արեց,—
Եաիկ գըմմեն Լենին արեց։

Ոսկուն թալեց իրեք գեխից,
Խմբապետքեր փախան գեղից.
Եա վո՞ն արեց, եա վո՞ն արեց,—
Եաիկ գըմմեն Լենին արեց։

Բալշևիք եկավ գդակ—պոպոզ,
Գառնեցըքոնց[3] բըռներ ի մոզ.
Եա վո՞ն արեց, եա վո՞ն արեց,—
Եաիկ գըմմեն Լենին արեց։

1 Նիկոլայ II ցարը։
2 Պետրոպոլ—Պետերբուրգ—Պետրոգրադ—Լենինգրադ։
3 Խոսքը վերաբերում է խմբապետներին։

Ծընդոն[1] ասեց.—Մեր բան է զուր,
Թողեք փախենք դըխ Զանգեզուր.
Ետ վո՞ն արեց, ետ վո՞ն արեց,—
Ետիկ թամըզ Լենին արեց։

Ասատուշ[2] ասեց.—Ձիմ թալլած մալ
Ի՞մալ թողկեմ, փախնիմ ի՞մալ...
Ետ վո՞ն արեց, ետ վո՞ն արեց,—
Ետիկ բուլոր Լենին արեց։

Ասել է 65 տարեկան անգրագետ գյուղացի **Գևորգ** Շիրոյանը (բնիկ բաշկալեցի)։

[1] Մաուզերիստ, դաշնակ խմբապետ։
[2] Գառնեցի մաուզերիստ խմբապետ։



# ԼԵՆԸՆՈՒ ԽԱՂ

Լենի եկավ ինչըխ բազե,
Ջա՜ն լե, լե, լե, լե.
Մե ազատեց շատ սթամե,
Ջա՜ն լո, լո, լո, լո։

Լենի վոր կա՝ մեկ թավատ եր,
Ջա՜ն լե, լե, լե, լե.
Լենու գործեր ադալաթ եր,
Ջա՜ն լո, լո, լո, լո։

Լենու արած շատ իրավ եր,
Ջա՜ն լե, լե, լե, լե.
Լենու գործեր հախշարք չավ եր,
Ջա՜ն լո, լո, լո, լո։

Լենու զորք եր Կարմիր Բանակ,
Ջա՜ն լե, լե, լե, լե.
Բոմագ ին ամմեն ժամանակ,
Ջա՜ն լո, լո, լո, լո։

Լենու շնուխք պիրեց մեզի,
Ջա՜ն լե, լե, լե, լե.
Լենու պիրած մե կոլխոզ ի,
Ջա՜ն լո, լո, լո, լո։

Արժի հախշըրի—դունյի մալին,
Ջա՜ն լե, լե, լե, լե.
Լենու պիրած՝ Շիրկանալ ի,
Ջա՜ն լո, լո, լո, լո։

Մեռնիմ Լենու վարթ ջամալին,
Ջա՜ն լե, լե, լե, լե.
Լենու հաշկեռթ ի Ըստալին,
Հե՜յ ջա՜ն լո, լո, լո, լո։

Ասել է սկանցի 62 տարեկան պառավ Նուբար Խըն-խուրյանը։

★

Բճիճ գեղին դրեց գակուն,
Լենինո, Լենինո.
Մեռնեմ մեր Լենինու խոքուն,
Լենինո, ջանինո:

Նոքար, խզմաթ տեր ին դառե,
Լենինո, Լենինո.
Մեկ-մեկու ընկեր ին դառե,
Լենինո, ջանինո:

Սաղ ճժուկներ ըշկոլ մտան,
Լենինո, Լենինո.
Լիխկայաններ հուսում կիտան,
Լենինո, ջանինո:

Լենի հաշխար շինեց դրախտ,
Լենինո, Լենինո.
Վճռեց քյասիր-քյասուրայ բախտ,
Լենինո, ջանինո:

Լենի քշեց քյոխվա, գզիր,
Լենինո, Լենինո.
Թյասիր աղրն, քեզի իգին,
Լենինո, ջանինո:

Լենի հաշխար շինեց խավսար,
Լենինո, Լենինո.
Լենի ունի քար ը քյասար,
Լենինո, ջանինո:

Ասել է Ղօղալ գյուղացի (Նոր-Բայազետի օրջան)
Զարո Առաքելյանը, 30 տարեկան, բանվորուհի:



## ՄԸՐ ԽԱՉՈՑԻ ԽԱՂ

— Տղա՛ Խաչո, բաթրա՛ք Խաչո,
Քո խի՛ն փոստե փափաղի տեղ
Գլխիտ դրած ես շափախկեն
Վո՞վ ի տվե, վո՞վ ի տվե:

— Գլխիս դրած էս շափախկեն
Լենի՛ն ի տվե, Լենի՛ն ի տվե:

— Տղա՛ Խաչո, նոքա՛ր Խաչո,
Քո ջընդըռ արխալըղի տեղ
Վրիտ թազա եսա ֆուինջ
Վո՞վ ի տվե, վո՞վ ի տվե:

— Վրիս խաքած թազա ֆուինջ
Լենի՛ն ի տվե, վո՞վ ի տվե:

— Տղա՛ Խաչո, ֆաղի՛ր Խաչո,
Քո քըրքըրված արայի տեղ
Վրիտ մահուդ եսա փալթո
Վո՞վ ի տվե, վո՞վ ի տվե:

— Տա՛, չե՞ս գիտի՝ վո՞վ ի տվե,
Լենի՛ն ի տվե, վո՞վ ի տվե:

— Տղա՛ Խաչո, յեթըմ Խաչո,
Քո կապիկե մեշկապի տեղ
Սեւսուփ, խորոտ եսա գոտին
Վո՞վ ի տվե, վո՞վ ի տվե:

— Կապած սեւսուփ կարմիր գոտիս
Լենի՛ն ի տվե, Լենի՛ն ի տվե:

— Տղա՛ Խաչո, քյասը՛բ Խաչո,
Քո քյոմուր շալիկ—թմբըրնի տեղ
Ես փաթըլղա չամաշուրներ
Վո՞վ ի ավե, վո՞վ ի ավե։

— Իմ փաթըլղա չամաշուրներ
Լենի՛ն ի ավե, վո՞վ ի ավե։

— Տղա՛ Խաչո, չըփլա՛խ Խաչո,
Քո փաթթալա արխիններաց տեղ
Եսա վզնով սև սապոքներ
Վո՞վ ի ավե, վո՞վ ի ավե։

— Եսա վզնով սև սապոքներ
Լենի՛ն ի ավե, վո՞վ ի ավե։

— Տղա՛ Խաչո, յեսը՛ր Խաչո,
Քո ըլկըլված չափ լեզվի տեղ
Եսա թրաշ, ճարտար խոսքեր
Վո՞վ ի ավե, վո՞վ ի ավե։

— Եսա թրաշ, ճարտար խոսքեր
Լենի՛ն ի ավե, վո՞վ ի ավե։

— Տղա՛ Խաչո, խո՛րած Խաչո,
Քո անտաշ ղըռ շարժումի տեղ
Եսա ոսըմ, կիտնակըթոն
Վո՞վ ի ավե, վո՞վ ի ավե։

— Եսա ոսըմ, կիտնակըթոն
Լենի՛ն ի ավե, վո՞վ ի ավե։

Ասել է ակնեցի Զանո Գրիգորյանը, 28 տարեկան: Երգն ունի հատուկ յեղանակ. շատ տարածված է Դառնիկի յենթաշրջանի գյուղերում:



★

Մենք ունենք մեկ լավ Լենին,
Մեռնիմ Լենինու գլխին.
Դին ը դիրագ անխախտ ի,
Մեռնիմ Լենինու բախտին:

Բախտ ու իղբալը շատ ի,
Մեր Լենինը մեկ խատ ի.
Մեկ խատ պայծառ ճրաք ի,
Թո դուշմանը արաքի:

Տրաքի, վով չի ուզի,
Մեր Լենինը մեկ լուս ի.
Լուսավորեց աշխարքը,
Կեցցե Լենինի փառքը:

Ազար-բեզար կուլակին,
Մեռնիմ Լենինու կտակին:

Ասել է Նոր-Բայազեդցի 18 տարեկան Նոյեմ Սիմոնյանը. բանվորուհի Ղըռում:

★

Լենինի խոսքերը մեկ-մեկ անգին քար,
Մեր թիկունքին կանգնած էր ինչպես բարձր սար.
Աշխարհի մեջ նրան նման շատ քիչ կար,
Շնորքով լցված եյիր, քաջ ընկեր Լենին։

Քո տեղը կանգնած է ընկեր Ստալին,
Ժողովուրդն է ընտրել ամենալավին.
Այսուհետև ապահով է ժողովուրդ.
Կեցցե՜ գործ տարողդ, քաջ ընկեր Լենին։

Մի քանի բառեր ասավ Հակոբ Գեվորգյան,
Ամբողջ ժողովուրդը թող լավ իմանան.
Լենինի պատմությունը յերբեք չմոռանան,
Այս է իմ գովեստս, քաջ ընկեր Լենին։

Ասել է Շիրվանջուղ (Արթիկի շրջանի) գյուղացի Հակոբ Գեվորգյանը, 32 տարեկան, կոլտնտեսական։





# ՍՏԱԼԻՆ

# ՄԵՐ ՀՈՒՅՍ ՍՏԱԼԻՆ

Դու մեր կյանքի միակ փրկիչ, դու մեր պահապան Ստալին,
Մեր սրտերի ամեն ցավի բժիշկ, դեղ-դարման, Ստալին.
Դու լույսերի գլուխ գործող, մութի սև խավարի դեմ,
Սև մութ ամպերին կործանող փայլուն ծիածան, Ստալին։

Վիշտն ու կարիք մեռավ մեր մեջ, մեր աշխարհը դրախտ է այսօր,
Ուր նայում ես — խինդ ու ծիծաղ, երջանկություն բախտ է այսօր.
Այդ հավատը մեր սրտերում միշտ վառ ու անխախտ է այսօր,
Որպես հարատև արեգակ, անվերջ, հավիտյան, Ստալին։

Արևելքից մինչ արևմուտք, հյուսիսից հարավ վողջ աշխարհ,
Ազատության դաշտի վրա քո արևն է կապել կամար.
Դու բնության միակ նմուշ, դու միակ փրկիչ մեզ համար,
Ազատության նոր արշալույս, մտքերի ոսկիան, Ստալին։

Խորաթափանց քո մտքերը երբև գարնան մայիս մեր մեջ,
Վառման բույրի անուշ հովի շողով են ման գալիս մեր մեջ.
Ամեն բույն կյանք ու արև, հույս ու սեր են տալիս մեր մեջ,
Դու մեր արև, դու մեր մայիս, դու մեր գարուն, ջան Ստալին։

Այս իմ յերգը ժողովրդի վողջ սրտերն է քո դեմ բանում,
Վորովհետև շատ եմ յեղել ամեն շրջան ու ավանում.
Աշխատավոր մարդկությունը, վորպես մեծ հոր՝
քեզ է պաշտում,
Բանի վոր ամեն բանի մեջ քեզ են պարտական, Ստալին։

Ազգ ու ազինք արյան ծովից այսոր կյանքի դրախտն
են ընկել,
Նենգ ու դավի ճահճից փրկված, ծաղկած բուրաստան
են ընկել.
Վողջ ազգերը յեղբայրացած, խաղաղության գիրկն
են ընկել,
Հանուն ցանած քո սերմերի, բարի սերմնացան, Ստալին։

Սրտիս հարմար լեզու չունեմ ամեն բարիք թվելու,
Սարեր-ձորեր հողի առած գալիս են փառքդ տոնելու.
Այսոր աշխարհն է պատրաստված իր սիրտն ու հոգին
քեզ տալու,
Այնքան վոր վեհ ու ազնիվ ես, դու մեր պատվական
Ստալին։

Ի՞նչ փույթ, վոր հարբած ֆաշիզմը չանկռել կուզե
յերկաթ կամքից,
Կամ կատվի պես թաթ է մեկնում անվեհեր ու պող-
պատ կամքից.
Մի՞թե այդ կույրը չի տեսնում, վոր աշխարհն է
անհաղթ կամքից
Հետը կապված մեկ մարդու պես, մեկ սրտի նման,
Ստալին։

Կարմրադրոշ քո բանակը, վոր մեր ծոցից ենք
քեզ տվել,
Լենինյան բարձր հանճարի հոգին նրանց մեջն ես դրել.



Մեր տղայք, աղջկերք, սնված քո շնչով, հերոս են
դառել,
Վոր ոձից էլ վատ թշնամուդ հակահարված տան, Ստալին։

Այսոր սերունդներ միացված Լենինյան մեծ հանճարի
շուրջ,
Ու քո ձեռքով կռած-կոփած փրկության ճանապարհի
շուրջ,
Կոմունիզմի վառ շողերը արագ թափով աշխարհի շուրջ,
Այսոր քո հանճարն է վառում, լույսերի պաշտպան
Ստալին։

Աշխույժ հոգիս լսել կուզե գեթ մի րոպե ձայնդ ազդու,
Վողջ աշխարհին մեկ սիրտ դարձնող հայրական
հրամանդ ազդու.
Կեցցե՛ փայլուն մտքից կերտված, անխախտ հենա-
րանդ ազդու,
Կեցցե՛ կարմիր բանակիդ հետ, անվախճան Ստալին։

Ասել է Ապարանի շրջանի Ղազնաֆար գյուղացի
54 տարեկան կույր աշուղ Աշխույժը։

## ՍՏԱԼԻՆ

Արևի պես փայլ ես տալիս դու լուսատու հուր Ստալին,
Հաղթանակը քո ձեռքիդ է, միտք ու զենքդ սուր,
Ստալին,
Թշնամիքդ ինչ էլ արին, դու միշտ արթուն մնացիր,
Հակառակորդիդ բաղձանքը անցավ իզուր, Ստալին։

Միշտ հավատարիմ են քեզի քո անկեղծ ընկերներդ,
Ամեն կողմեր մարդիկ ունիս, պաշտպանում են կարգերդ,
Թշնամիքդ սարսափում են տեսնելով քո պատկերըդ,
Զար փաշխաններին վառելու կրակ ու հուր, Ստալին։

Աշուղ-Աթան կասե՝ հողմ ու քամին յերկաթին ինչ կանի,
Գիշեր-ցերեկ կուզե փչի, նա ամուր պատին ինչ կանի,
Ցաշխատը փայտ է, դու պողպատ, փայտը պողպատին
ինչ կանի,
Ամենայն կողմերով հզոր դու լիակատար, Ստալին։

Ասել է Զանգեզուրի Գորիսի շրջանի Կարաշեն
գյուղացի, մոտ 80 տարեկան աշուղ Աթան։



## ՈՔՆԵՑԻՐ ՇԱՏԻՆ...

Ոքնեցիր շատին,
Խեղճին, աղքատին,
Պատժեցիր վատին,
Ընկեր Ստալին։

Անճար տնանկին,
Մուզդուր-բատրակին
Դու թևիդ տակին
Պահիր, Ստալին։

Բուրժուին ճնշիր,
Մեր յերկրից քշիր,
Դաշնակին փշրիր,
Թառլան Ստալին։

Կնյազ, աղավաթ,
Ինչքան կային վատ,
Տները բարբադ
Արիր, Ստալին։

Տերտեր, վարթապետ,
Դաշնակ—խմբապետ,
Խառնիր իրար հետ,
Քշիր, Ստալին։

Կուլակին երիր,
Յերկրից քերիր,
Մեզ նոր կյանք բերիր,
Ազիզ Ստալին։

Կրոնից, վանքից,
Են խավար կյանքից,

Դարը տանջանքից,
Փրկիչ Ստալին։

Մեր բարի ընկեր,
Մեր ամաքլի հեր,
Մեր պաշտպան ու տեր,
Ղամխար Ստալին։

Ասել է Վերդին, Ղամարլուի շրջանի Գետա-
նատ գյուղացի, 52 տարեկան։



## ՋԱ՛Ն ՍՏԱԼԻ՛Ն

Դալար մնաս դու մեզ համար,
Հե՜յ Ստալին, ջա՛ն Ստալին.
Երջանկության դուռը բացար,
Մեր Ստալին, ջա՛ն Ստալին։

Աշխարհի մեջ դու մի հատ ես,
Հե՜յ Ստալին, ջա՛ն Ստալին.
Արեգակին համեմատ ես,
Մեր Ստալին, ջա՛ն Ստալին։

Առաջ քաշեցիր աղքատին,
Հե՜յ Ստալին, ջա՛ն Ստալին.
Պատժեցիր չարին ու վատին,
Մեր Ստալին, ջա՛ն Ստալին։

Լուս ու դպրոցներ անհամար,
Հե՜յ Ստալին, ջա՛ն Ստալին.
Դու կառուցեցիր մեզ համար,
Մեր Ստալին, ջա՛ն Ստալին։

Ասել է Հմայակ Հակոբյան—Ղափանի շրջանի Քա-
ջարան գյուղացի։

## ԿՈԼԽՈԶԸ ԱԼԻ՛Ն Ա...

Կոլխոզը ալին ա,
Ցորենը կալին ա.
Մեզի ուրախություն բերող՝
Ընկեր Ստալինն ա։

Մուլքին ու մալին ա,
Ունեւոր հալին ա.
Մեզի ազատություն տվող՝
Ընկեր Ստալինն ա։

Ե՛յ գյալ ու գյալին ա,
Կարպետ ու խալին ա.
Կոլխոզները շենացնող՝
Ընկեր Ստալինն ա։

Շիրմահ ու շալին ա,
Ուրախ դարարին ա.
Սովետ աշխարհը շենցնող՝
Ընկեր Ստալինն ա։

Սմբո Դուրգարյան—Ն. Բայազեցի օրգ.



## ԹԵԼԼՈՒ ՅԱՐ

Ծուլությունը ատեցի,
Յա՛ր, յա՛ր.
Կոլխոզումը գտեցի,
Թելլու յար։

Կուլակներին քշեցին,
Յա՛ր, յա՛ր.
Մեզի առաջ քաշեցին,
Ելլու յար։

Ստալինի խրատով,
Յա՛ր, յա՛ր.
Մեր ցավերը փարատավ,
Թելլու յար։

Մենք Լենինի բանակն ենք,
Յա՛ր, յա՛ր.
Ստալինի զավակն ենք,
Ելլու յար։

Ստալինի սայիցը,
Յա՛ր, յա՛ր.
Պրծանք դարդ ու ցավիցը,
Թելլու յար։

Հին աշխարքից նաշի յեմ,
Յա՛ր, յա՛ր.
Հոկտեմբերի յաշին եմ,
Ելլու յար։

Ասել է Նուբար Հովհաննիսյան—Աշտարակի օրգ.

## ԽԱԼԻ

Մատ ը յեղունկ մաշել եմ,
Խալի գործել, նախշել եմ.
Ստալինի նկարը
Նրա վրա քաշել եմ։

Ե՜յ ջան, ընկեր Ստալին,
Քեզնով հասանք լավ հալի,
Նախշած, գործած, նկարած,
Քեզի փեշքեշ իմ խալին։

Խալու խետ ել իմ ջանը
Ըլնի Նրա ղուրբանը.
Թող շատ ապրի Ստալին,
Կեցցե՛ իրա դավրանը։

Վարսիկ Աբելյան—Ախտայի շրջանից



## ՍՏԱԼԻ՛Ն

(Դաստան)

Ստալինի արածը
Աշխարհով մեկ չափ եմ ասում,
Խելոք, բանիմաց, ընտիր,
Քաջ, բարեհամբավ եմ ասում։

Քաջ բարեհամբավ ու ժիր,
Գործով արժան ու ընտիր.
Բարի, արդար վեր ու դիր,
Ամեն կողմով լավ եմ ասում։

Ամեն կողմով լավն իրա՝
Տարածվեց յերկրի վրա.
Ղեկավար գործը Նրա՝
Մի անկործան նավ եմ ասում։

Անկործան, գործովը մեծ,
Միտքը պարզ, սիրտն անկեղծ.
Մեզ յերջանիկ կյանք բերեց,
Ամեն ինչով բավ եմ ասում։

Ամեն ինչով լիացավ,
Ժողովուրդն անհոգ, անցավ,
Էն հինը գնաց, անցավ,
Անեծք ու պարսավ եմ ասում։

Անեծք ու պարսավ վատին,
Յուր գործով համեմատին,
Նոր կյանքի մեծ անհատին,
Գովեստս հարկավ եմ ասում։

Հարկավ գովեստի արժան,
Անհամեմատ, աննման.
Թե գովեմ հազար բերան,
Գիտցեք—դեռ սակավ եմ ասում։

Սակավավետ, իմաստուն,
Հանճարեղ, միտքը արթուն.
Հույժ համբավը մեծ մարդու՝
Հյուսիսից հարավ եմ ասում։

Հյուսիսից հարավ Նրա
Տարածվեց բարի լուրը.
Աշուղ Վերգիս եմ՝ իրա
Տեսության ծարավ եմ ասում։

Ասել է Վերգին·



# ՍՏԱԼԻՆ

Անկեղծ սրտով պիտի գրեմ խոսքերս,
Վողջ աշխարհում մեկ հատ, ընկեր Ստալին.
Գովասանքով քեզ նվիրեմ յերգերս,
Նոր Աշխարհի դու հայր, ընկեր Ստալին։

Դու Լենինի աշակերտն ես իմաստուն,
Կազմեցիր բազմազգի Խե Սե Միություն,
Զոր ու գիշեր աշխատում ես մշտարթուն,
Յերկրին տալու լավ կյանք, ընկեր Ստալին։

Միտքդ հանճարեղ է, պողպատ է կամքդ,
Հավատարիմներով պինդ է թիկունքդ,
Ամուր ու անխախտ է քո դրած հիմքդ,
Ու կապրի հավիտյան, ընկեր Ստալին։

Կոպերատ է դառել վողջ սառ և տուրըդ,
Արար-աշխարհ գիտե համբավդ, լուրըդ,
Կոլխոզի մեջ առատ հողըդ ու ջուրըդ,
Տալիս է բարձր բերք, ընկեր Ստալին։

Դու մի ծառ ես՝ պտուղներդ քաղցրահամ,
Վողջ ազգերին դարձրիր իրար բարեկամ,
Յեսայանս պիտի յերգեմ ամեն ժամ,
Մեր սիրելի, մեր թանկագին Ստալին։

Ասել է Կոտայքի շրջանի Գյումրեզ գյուղացի, մոտ 50 տարեկան կոլտնտեսական, ինքնուս բանաստեղծ Մնացական Յեսայանը:

## ԱՌԱՋՆՈՐԴ

*Քեզ ենք սիրում, քեզ ենք գովում,*
*Յերգ ու տաղով, ջա՛ն առաջնորդ.*
*Խաղ ու պարով, բաղչա-բաղում,*
*Սիրուդ սազով, ջա՛ն առաջնորդ:*

*Մեր ամենքիս աչքի լույսն ես,*
*Մեր յերջանիկ կյանքի հույսն ես,*
*Աշխատողի խրախույսն ես,*
*Գործով աննման, առաջնորդ:*

*Մեր յերկիրը զարդարվեցավ,*
*Ծաղկեց ու լուսավոր դարձավ.*
*Հողն ու ջուրը առատացավ,*
*Գործով աննման, առաջնորդ:*

*Այս մեր ուրախ, շեն աշխարհում,*
*Մեր սրտովը կյանք ենք վարում.*
*Չկա թայդ վոչ մի տեղում,*
*Ջա՛ն Ստալին, ջա՛ն առաջնորդ:*

Ասել է Մնացական Յեսայանը.



## ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

*Մեծ Ստալին, ջանքիդ մեռնեմ,*
*Քու մարդասեր կյանքիդ մեռնեմ.*
*Ամեն աշխարհ սեր ես սփռում,*
*Ծայրից ամուր կամքիդ մեռնեմ:*

*Աշխարհ յեկար ինչպես լույս որ,*
*Յեղար միշտ մեզ պաշտպան հզոր,*
*Քեզանով ենք մենք կյանք առնում,*
*Թե գյուղացի և թե բանվոր:*

*Հանճար ես դու արեգական,*
*Արևի պես անմահական,*
*Մեր աշխարհին կյանք ես տալիս,*
*Լուսավորում մեր ապագան:*

*Շերամս քեզ լավ եմ ճանաչել,*
*Եշխիդ համար խաղ եմ կանչել,*
*Թեպետ չորցել եյի վաղուց,*
*Այսոր նորից եմ կանաչել:*

Ասել է բնիկ լենինականցի, 70-ին մոտ. աշուղ Շերամը (Գրիգոր Տալյան):

# ՍՏԱԼԻՆ

*Կուսակցության մեծ առաջնորդ,*
*Պողպատից ամուր, Ստալին.*
*Վողջ աշխարհին անուշահոտ,*
*Դուն ծաղիկ մաքուր, Ստալին։*

*Առնենք քեզանից օրինակ,*
*Կուսակցության փառք ու պարծանք.*
*Կարմիր Աշխարհի արեգակ,*
*Զովարար աղբյուր, Ստալին։*

*Ժողովրդի կյանքն ու արև,*
*Անուշախոս, քաջաբարև,*
*Հզոր արծիվ ես սրաթև,*
*Դուն խաղաղարար, Ստալին։*

Ասել է Աշտարակի շրջանի Ղարաչավերան գյուղացի 50 տարեկան աշուղ Խազային (Հակոբ Գալստյան):



# ՍՏԱԼԻՆ

*Խաս ջուռայի սազը ձեռիս,*
*Փահմիտ յերքեմ խաղ, Ստալին.*
*Աշխարքով մեկ քու համփավլիտ,*
*Անեմ յերք ու տաղ, Ստալին։*

*Դաստեքս ա վեսկլի սինի,*
*Ձիմ յարամիշ մինը մինի.*
*Թող քու ումբրըդ յերկար լինի,*
*Արևի շափաղ, Ստալին։*

*Սեր ու սավդի հիմքը տրիր,*
*Պոլոր ազգերին սիրեցիր,*
*Ընդունեց թամուզ ախպեր ըրիր,*
*Հունց մի տուն, օջախ, Ստալին։*

*Բանակ ունենք հազար-հազար,*
*Հուրիշ կա վոչ ընդուր համար.*
*Գյուղի բաղ ա դառել սար-քար,*
*Դունյա բիթուն սաղ, Ստալին։*

*Ձիմ քյասիբին ընդունեցիր,*
*Վարլի, զանգին խոփիկ ըլվիր.*
*Մեր աշխարքը դըրախտ շինիր,*
*Բանց վեսկլի վարաղ, Ստալին։*

*Աշուղ Ռոստոմն Զանգեզուրցի,*
*Համբավըդ շուտանց լըսացի.*
*Քեզ արևից մենձ իմացի,*
*Արևի շափաղ, Ստալին։*

Ասել է բնիկ զորիսեցի, հինգնուս բանաստեղծ (աշուղ) 25 տարեկան Ռոստոմը (Սերո Խանզադյանը):

# ՊՈՂՊԱՏԵ ՄԱՐԴԸ

(ՍՏԱԼԻՆ)

*Միտքդ պայծառ, կամքդ յերկաթ,*
*Բազուկդ հաղթ, պողպատե մարդ.*
*Աստղդ վառ, հարգողդ շատ,*
*Բազմաաշխատ, պողպատե մարդ։*

*Դու անհամար մարդկանց համար,*
*Արև ես վառ, կապած կամար.*
*Ցեվ դարեդար գործդ արդար,*
*Կհիշվի հար, պողպատե մարդ։*

*Հյուրին եմ յես, պաշտում եմ քեզ,*
*Հերոսի պես փրկեցիր մեզ,*
*Ընկճվող չես, անհաղթ ես, վես,*
*Արծվի պես, պողպատե մարդ։*

Ասել է 22 տարեկան կույր շրջիկ յերգչուհի Հյուրին (Լենինականի շրջանից)։



# ՋԱ՛Ն ՍՏԱԼԻ՛Ն

*Դու նստում ես Մոսկվայումը,*
*Ջան Ստալին, ջա՛ն Ստալին,*
*Յերկրի համար դու ես ցավում,*
*Ջան Ստալին, ջա՛ն Ստալին,*
*Պողպատի նման Ստալին։*

*Մեր յերկիրն ես դու զարդարում,*
*Ջան Ստալին, ջա՛ն Ստալին,*
*Կուլտուրան մեր մեջը բերում,*
*Ջան Ստալին, ջա՛ն Ստալին,*
*Պողպատի նման Ստալին։*

*Բարի աչքով մեզ ես նայում,*
*Ջան Ստալին, ջա՛ն Ստալին,*
*Գրիգորը նոր կյանք է քաշում,*
*Ջան Ստալին, ջա՛ն Ստալին,*
*Պողպատի նման Ստալին։*

Ասել է սամսաղնեցի 45 տարեկան կույր աշուղ Գրիգորը.

# ԲԱՐԵՎ ԵՐԵՔ

Մոսկովի յան Թանող անուշ կռունկներ,
Բաղցր Ստալինին շատ բարև երեք.
Ղամ-դուսից ազատված Կովկաս դիարից
Հընդեր Ստալինին շատ բարև երեք:

Են վոր մե ազատեց Նիկոլի տուրքից,
Դաշնակ-մուսաֆաթի կոտորող զորքից,
Ախպերացած քրդից, հայից ու Թյուրքից
Ումուդ Ստալինին շատ բարև երեք:

Աշխարհ լուսավորվեց Լենինի ճրաքից,
Ստալին փրկեց մե սրից, կրակից,
Կոլխոզնիկներ—միջակ, քյասիբ, բատրակից
Ագիզ Ստալինին շատ բարև երեք:

Վոր մեզի ազատեց ցարերի զաթից,
Սովի, կովի ցավի սև զիյամաթից,
Ազատ, ուրախ, կուշտ ապրող ռայաթից
Մեր խեր Ստալինին շատ բարև երեք:

Բարև երեք զըմեն միլլաթից, ելից,
Ընդուր վոր մե փրկեց գաղանից, գելից,
Բյավառեցի կոլխոզնիկ Առաքելից
Ջոմարդ Ստալինին շատ բարև երեք:

Ասել է Բյավառեցի կոլտնտեսական Առաքելը.





# ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՈՎՔ

## ԿԻՐՈՎԸ

*Ստալինի քաջ ընկերը,*
*Սիրելի Կիրովը գնաց,*
*Մեր Խորհրդի լուսաբերը,*
*Պաշտելի Կիրովը գնաց։*

*Կայծակ, կրակ էր տեղն ու տեղը,*
*Սրտով ընտիր, գործով ահեղ,*
*Խելոք, կորիճ, կամքով ուժեղ,*
*Հարգելի Կիրովը գնաց։*

*Թշնամուն սար ու սարսափ էր,*
*Ուր հասներ՝ կրակ կը թափեր,*
*Արած գործերը անչափ էր,*
*Գովելի ընկեր Կիրով։*

*Ստալինը շատ ափսոսաց,*
*Բոլոր ժողովուրդը սգաց,*
*Հիշատակը միշտ անմոռաց,*
*Սիրելի Կիրովը գնաց։*

Ասել է Զանգեզուրի Գորիսի շրջանի Քարաշեն գյուղացի, 80-ին մոտ, աշուղ Արան։

# Կ Ի Ր Ո Վ

Սրտով նվիրվեցիր հեղափոխության,
Մեզ արժանացուցիր լույս ազատության,
Դու մի կրակ եյիր՝
Աննման Կիրով,
Քո հերոս անվանը
Դու արժան, Կիրով:

Կռիվներում սարեր, քարեր չափեցիր,
Բոլոր ճակատներում արյուն թափեցիր.
Մեզի ազատություն
Բերող, ջան Կիրով.
Ստալինի սիրուն
Դու արժան, Կիրով:

Դու միշտ անկեղծ ու ջիգարով կռվեցիր,
Արնիտ գնով ժողովրդին փրկեցիր,
Բոց ու կրակ եյիր,
Աննման Կիրով.
Բոլշևիկ անվանըդ
Դու արժան, Կիրով:

Լենին—Ստալինի
Աշակերտ Կիրով,
Բոլոր կռիվներում
Ամուր բերդ, Կիրով:

Զորնար Նիկոլովի[1] բիլագը, թեը,
Վոր չխավարեցներ քո լուս արևը,

[1] Ընկեր Կիրովին սպանող՝ տրոցկիստ-զինովյեվական բան-դիտ-տեռորիստ Նիկոլայեվը:



Մեզի ազատություն
Բերող, ջան Կիրով,
Քո հերոս անվանը,
Միշտ արժան, Կիրով:

Քո մահով ռայաթը լալիս է սրտում,
Անունըդ անմահ կը մընա մեր սրտում,
Մեզի ազատություն
Հասցնող Կիրով,
Բոլշևիկ զորավար,
Քաջ, ընտիր, Կիրով:

Սավետ աշխար սուք ա հաքել քեզ համար,
Քո հայլիքըտ մենք կհանենք անպատճառ.
Լենին—Ստալինի
Դու ընկեր Կիրով,
Բոլշևիկ զորավար,
Քաջ, ընտիր, Կիրով:

Յերգել է Արամսի Բաբայանը Ն. Ախտայի տնմավա-վանառում: Հորինողն անհայտ է:

## ԸՆԿԵՐ ՄՈԼՈՏՈՎ

*Հին զվարդիայի կայուն անդամ,*
*Պատվական ընկեր, Մոլոտով.*
*Աշխատանքներում մշտական*
*Ժրաջան ընկեր, Մոլոտով։*

*Շատ նեղություններ քաշեցիր,*
*Բանտերում կյանքդ մաշեցիր,*
*Ու անվհատ աշխատեցիր*
*Մշտական, ընկեր Մոլոտով։*

*Դու յես մեր Սովետի զարդը,*
*Ինչպես գարնան անուշ վարդը,*
*Ստալինի մոտիկ մարդը,*
*Անբաժան ընկեր, Մոլոտով։*

*Արսեն կտամ գովասանք,*
*Ու կխնդրեմ քեզ յերկար կյանք.*
*Աշխատողներ շատ ունենանք*
*Քեզ նման, ընկեր Մոլոտով։*

Ասել է աշուղ Արսենը.



## ԸՆԿԵՐ ՎՈՐՈՇԻԼՈՎ

*Զորապետաց գլխավորն ա,*
*Ապրի ընկեր Վորոշիլով.*
*Կարմիր Բանակի ընտիրն ա,*
*Ապրի՜ ընկեր Վորոշիլով։*

*Վորոշիլով կամիսար ա,*
*Մեր ցավերին դեղ ու ճար ա.*
*Մեր թիկունքին քանց մի սար ա,*
*Ապրի՜ ընկեր Վորոշիլով։*

*Իրա զենք ու զրահ շատ ա,*
*Մեզի փրկելու կաշխատա.*
*Են նամարդ դուշմանը վատ ա,*
*Ապրի՜ ընկեր Վորոշիլով։*

*Վորոշիլով մեկ կրակ ա,*
*Մեզի փայլուն արեքակ ա.*
*Քյասիբ բանվորի զավակ ա,*
*Ապրի՜ ընկեր Վորոշիլով։*

*Վորոշիլով բալշևիկ ա,*
*Դուշմանին կանա Ջիքա-թիքա.*
*Զորապետաց մեջը մեկ ա,*
*Ապրի՜ ընկեր Վորոշիլով։*

*Վարոսն եմ խոսքերն ասեց,*
*Վորոշիլովին գովեստ ավեց.*
*Կարմիր Բանակին ա նա մենձ,*
*Ապրի՜ ընկեր Վորոշիլով։*

## ՎՈՐՈՇԻԼՈՎ

Անկեղծ սրտով քեզ սիրեցի,
Բոյիդ մատաղ, Վորոշիլով.
Ձիուդ վրա արի, անցի,
Ամեն մի չաղ, Վորոշիլով։

Հռչակավոր անուն ունես,
Աշխարհի մեջ դու փայլում ես.
Հերոսական նշան ունես,
Կրծքիդ շարքով, Վորոշիլով։

Ժողովրդի կյանքի համար,
Մարշալներ ունես զորավոր,
Կարմիր Բանակի գլխավոր,
Անկեղծ սրտով, Վորոշիլով։

Ռազմիկներ ունես պատվական,
Տեխնիկատ ուժեղ, զովական.
Տանկեր, նավեր, այրոպլան,
Իրանց կազմով, Վորոշիլով։

Բանվորի, գյուղացու հույսը,
Դու ես յեռանդ ու աշխուժը.
Կեցցե՛ քո մարտական ուժը,
Կայուն կամքով, Վորոշիլով։

Ասել է ինքնուս բանաստեղծ Մնացական Յեսայանը



## ԿԱԼԻՆԻՆ

Կալինին պապի, մատաղ քո հոգուն,
Դու մեր Սովետին հսկում ես անքուն.
Հսկում ես անքուն,
Գիշեր-ցերեկ զուն,
Մատաղ քո հոգուն։

Կալինին պապի, բանվոր ու տոկար,
Ո՞վ պետք է քեզ չափ նեղության տոկար,
Նեղության տոկար,
Նեղության տոկար,
Ո՛վ դու քաջ տոկար։

Կալինին պապի, ազնիվ կոմիսար,
Շատ տանջվեցիր ու փափագիդ հասար,
Ո՛վ դու ղեկավար,
Ազնիվ կոմիսար։

Սուրեն Նարինգյուլյան (Դիլիջան)։

## ՅԵՐԿԱԹԵ ԿՈՄԻՍԱՐԸ
(ՈՐՋՈՆԻԿԻՁԵ)

Ամենագետ, հաղթ ու հզոր,
Մեր յերկաթե կոմիսարը,
Հաղթանակում ե որե-որ,
Մեր յերկաթե կոմիսարը։

Կարմիր հայրենիքումը մեր,
Ճակատը բաց քայլում ե վեր.
Կառուցել ե շատ գիգանտներ
Մեր յերկաթե կոմիսարը։

Ընկեր Սերգոն գործող ե քաջ,
Անվախ հերոս, պարթևալանջ,
Տարեցտարի կերթա առաջ
Մեր յերկաթե կոմիսարը։

Ասել ե Վերգին։



## Մ Ի Կ Ո Յ Ա Ն

Անկեղծ սիրտս ուրախ, զվարթ
Խոսում ե իրավի մասին.
Անաստասի Իվանովիչ,
Ընկեր Միկոյանի մասին։

Ստալինյան չքնաղ դարի,
Աշխատանքի, սիրով արի.
Այս մեր ուրախ, շեն աշխարհի,
Ժիր ու ժրաջանի մասին։

Կանաչ արմատ մշտադալար,
Աշխատում ե նա միալար.
Ամբողջ ժողովրդի համար,
Գերազանց պլանի մասին։

Ամեն գործի մեջ նա վայել,
Անկեղծ, կյանքը չի խնայել.
Փառք ու պատվով ե աշխատել,
Բոլոր կանոնների մասին։

Ասել ե ինքնուս բանաստեղծ Մնացական Յեսայանը.

## ԸՆԿԵՐ ՄԻԿՈՅԱՆ

Ինչե՜ր արեցիր, ինչե՜ր,
Անհանգիստ, ցերեկ-գիշեր.
Դաշնակ—մուսաֆաթի հետ
Կռվեցիր, արիր անհետ.
Ջա՜ն Միկոյան, ջա՜ն, ջա՜ն,
Դու մեր աննման:

Քո կուսակցության համար
Աշխատեցիր անդադար,
Մանկությունից տանջվեցիր,
Մինչ նպատակիդ հասար.
Ջա՜ն Միկոյան, ջա՜ն ջա՜ն,
Անուշ պատվական:

Ասել է Փեփրոնե Ազիզյան (Սարդարաբաս):



## ՄՈԼՈՏՈՎ, ԿԱԼԻՆԻՆ, ԿԱԳԱՆՈՎԻՉ

Մեր աչքի լույս, մեր աննման ընկերներ,
Մոլոտով, Կալինին և Կագանովիչ.
Հայրենիքի անվախ, հերոս զավակներ,
Մոլոտով, Կալինին և Կագանովիչ:

Յերեք հարազատներ, խելոք հեռատես,
Աշխատում են հոգով, սրտով խնկալես.
Ամուր կրծքով պաշտպան կանգնած սարի պես,
Մոլոտով, Կալինին և Կագանովիչ:

Ստալինյան գործին սրտով սիրահար,
Անձնվեր մարտիկ, անշեղ ղեկավար.
Յերեքն էլ միասին՝ մեկ մեկուն հարմար,
Մոլոտով, Կալինին և Կագանովիչ:

Խորհրդային պայծառ լույսով լապտերներ,
Մեր յերջանիկ կյանքի հոտավետ վարդեր,
Լենին-Ստալինյան պարծանք հին բոլշևիկներ,
Մոլոտով, Կալինին և Կագանովիչ:

Ասել է Մնացական Յեսայանը:

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՒՆԵՐ

*

*Որդուն եկավ սարի փեշեն,*
*Կարմիրները լցվան մոշեն,*
*Գյուլլեն առավ Մուրադի դոշեն.*
*Փախիր դաշնակ, բոլշևիկն եկավ,*
*Քո սև ը սուք օրերն եկան։*

*Որդուն հասավ Ճալի ձորը,*
*Եկավ դաշնակի սև օրը,*
*Գյուլլեն մտավ Ասոյի փորը.*
*Փախիր դաշնակ, բոլշևիկն եկավ,*
*Թալան-թուլանիդ վերջն եկավ։*

*Որդուն հասավ Ճամբարակը,*
*Դաշնակի ջանն ընկավ կրակը,*
*Ցուրգոնով կրին ջամդակը.*
*Փախիր դաշնակ, բոլշևիկն եկավ,*
*Եկավ քո գրողը, եկավ։*

*Դաշնակ փախավ սարով-ձորով,*
*Փախնողին չես պահի զոռով,*
*Բադաք հասան քաղցած փորով.*
*Մավզերներ ծախին կերան,*
*Շատախաչներ, լոթռած բերան։*

*Թալանեցին մալականներ,*
*Տարան տալեքներ, լազաններ,*
*Դաշնակ հաշխարհի ապականն եր.*
*Դե հա փախեք, բոլշևիկն եկավ,*
*Եկավ, ձեր սև գրողն եկավ։*

Խատիսոֆը հասավ Պոլիս,
Թոկից փախած շուն ա խալիս,
Բամկից մեկեններն են գալիս.
Հայդե՛ դաշնակ, փախի՛ր գընա,
Էլ հետ չգաս, էնտեղ մընա։

Ասել է իջեվանցի 50 տարեկան Փարիսուն Յեղիզարյանը



★

Աղստաֆայից բերեցին լուրը,
Սեպուհը ասաց՝ մեր բանը զուր է,
Արամը կանչեց՝ Մուրադը ծուր է.
Փախի՛ր, ա՛յ դաշնակ, բանակը եկավ,
Քո վիզը կտրող դանակը եկավ։

Ուզուն-Թալայից բարձեցին ավտոն,
Պետը մոռացավ հաքնել յուր պալտոն.
Շուտ արա, ասավ—ձին քաշիր, Անտոն.
Փախի՛ր, ա՛յ դաշնակ, կարմիրներն եկան,
Փախի՛ր, հեռացի՛ր, յերկրի տերն եկավ։

Արարատովին տվին դըլեժը,
Ի՞նչ պետք է անի են սարսաղ գիժը,
Մինիստրների խառնվեց կաժը.
Փախի՛ր, ա՛յ դաշնակ, բալշևիկն եկավ,
Փախի՛ր, հեռացի՛ր, յերկրի տերն եկավ։

Խատիսով աղան հասավ մինչ Բաթում,
Շալակած վոսկին, մեկ էլ իր խաթուն,
Պարախոդ տվեք ասածու խաթրուն.
Փախի՛ր, ա՛յ դաշնակ, բալշևիկն եկավ,
Բալշևիկն եկավ, քոմագով եկավ։

Ասել է դիլիջանցի դերձակ Մնացական Արամյանը
Յերգը հորինել է իջեվանցի վոմն Արուս Առաքելյանը:

✭

Զախմախլվից անցավ զորքը,
Ջնջվեց դաշնակի գöրքը,
Անցավ, մտավ գետնի խորքը,
Կարմիր Բանակ, բարով եկար։

Ջաղացի մոտ բռնին դիրքը,
Կամանդիրն էր մեծը՝ ինքը,
Մեզի փրկեց կարմիր զենքը,
Կարմիր Բանակ, բարով եկար։

Ջարխեջից եկավ քöմադը,
Անցան մեր զորքի քամակը,
Դաշնակ փախավ, մտավ ծակը,
Կարմիր Բանակ, բարով եկար։

Իջևանից հանին դրոշը,
Եկավ մեծավորի խոշը·
Դաշնակների բանը բոշ ա,
Կարմիր Բանակ, բարով եկար։

Խաբար գնաց Դիլիջանը,
Սաղ մընա բալշևիկի ջանը,
Կորվավ Սեպուհի ջանը,
Կարմիր Բանակ, բարով եկար։

Ասել է Իջևանի շրջանի Աղդան գյուղացի Մամբրե Արզումանյանը.



## ՂՈՒԿԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Թշնամու ձեռքով
Նըհատակվեցիր,
Անվեհեր մարտիկ,
Ղուկաս Ղուկասյան։

Վեհ գաղափարի
Ազնիվ մարտնչող,
Խիզախ, քաջարի,
Ընկեր Ղուկասյան։

Քո ճանապարհից
Դու չը շեղվեցիր.
Հանդուգն, գործունյա,
Ազնիվ Ղուկասյան։

Անվախ կռվեցիր,
Դու չը ճնշվեցիր,
Չը ընկճըվեցիր,
Արի Ղուկասյան։

Բայց նենգ ու նամարդ,
Ստոր թշնամին
Վորոգայթ լարեց,
Ընկեր Ղուկասյան։

Գործդ ու անունդ
Կապրի հավիտյան.
Կարմիր նահատակ՝
Անմահ Ղուկասյան։

Ասել է Կարապետ Հաչյանը, ղարսեցի, մոտ 50 տարեկան. գրանանաչ։ Այժմ ապրում է Լենինականում։

## ՌՈՒԲԵՆԻ ՅԵՐԳԸ

Թոփերը կապեցին Եյլարա գուղը,
Եդ յոթը քշեր և մացեր ենք դուսը։

Բալշևիկն եկավ Եյլարա փոշալը,
Մաղաթ, Յերամ, հասիր Ռուբենի կուշար։

Իրեք կողմից եկավ քաֆր դաշնակը,
Կարկուտի պես մաղվեց կարմիր գնդակը։

Քաֆր գոմրեզցիք, ոգնության հասեք,
Մեր ուժը պակաս է, քանի՜ սպասեք։

Կարմիր պարտիզանի թիվը շատ քիչ է,
Զորս կողմը բռնեցին, ել ճարը ի՞նչ է։

Ռուբենը կանչեց.— Տղե՛րք, մի՛ վախեք,
Կռվե՛ք, մի՛ հանձնվեք, և վոչ ել փախեք։

Դուշմանը կատաղած յեկավ մոշիցը,
Գյուլլեն կպավ Ռուբենի դոշիցը։

Եյլարա դաշտերը ձուն է ու դուրան,
Սար ու քար ել լացին Ռուբենի վրան։

Սև շիվարը եկավ Սանամի հալին,
Սպանվելու լուրը բերին իր բալին։

Սելը լծին, սպանվածին բերեցին,
Խեղճ Սանամի գլխին սևեր կապեցին։



Բերին, դրին Ռուբենի դիակը,
Դոշին եր առել քաֆր գնդակը։

Լացե՛ք, լացե՛ք դուք ընկեր ու բարեկամ,
Ձեզի համար յես գնացի, ել չկամ...

Քաջ ընկերներ, դուք իմ տեղս բռնեցեք,
Ձեր պարտիզան Ռուբենին հիշեցեք։

Յերգի հորինողն անհայտ է։ 1921 թ. փետրվարյան ավանտյուրայից, Կոտայքի Եյլար գյուղի մոտ, դաշնակների կողմից սպանվում է Ռուբեն անունով մի կարմիր պարտիզան տղա։ Յերգը նրա մահին է։
Ծանոթ. բանահավաքի

## ԿՌԻՎ ԵՂԱՎ…

Կռիվ եղավ Դավա-բոյին,
Ինչքա՜ն անմեղ ընտեղ զոհվին,
Գերի ընկող շատ զրժգոհ ին,
Ամա՜ն մերիկ, ի՜նչ զուլում եր։

Բոլշևիկներ ջանել-ջիվան,
Աստված անի Սեփանի գիվան,
Ձեռեր, վոտներ կապեց չըվան,
Ամա՜ն, հասեք, ի՜նչ զուլում եր։

Խմբապետներ անխիղճ, անաստված,
Ձե քո՜ր չարեց արցունք ը լաց,
Թամբըզ պալից թափեցիք ցած,
Ա՜խ, վա՜խ, մերիկ, ի՜նչ զուլում եր։

Մընացողին բըրթին զուլով,
Բըրթվողին թալին զոռով,
Ջահիլ, բուղալա, մուրազով,
Ամա՜ն աստված, ի՜նչ զուլում եր։

Լաց-աղաղակ ըրռնեց բախչեք,
Ա՜խ, մի՜ ըշկեք, թողեք փախչեք,
Լաշով լցվեց թար ու թախչեք,
Ամա՜ն, ի՜նչ անխիղճ զուլում եր։

Սարեր ու քարեր վոխպացին,
Քանի՜ մերեր նստան, լացին.
Ա՜խ, մեր բալեք ծւր գնացին…
Յամա՜ն, շատ անխիղճ զուլում եր։



Թե ջուղաբը Լենինին գընա,
Խմբապետնե՜ր, ձեզի չի՜ մընա.
Բոլշևիկ հայիֆ կը հանա,
Ամա՜ն, շատ սիթամ զուլում եր։

1921 թվին ասել է Կոտայքի շրջանի Ավդալա գյուղի բնակիչ, բնիկ Իրանի Սալմաստի գավառի Մահլամ գյուղացի 65 տարեկան Գևորգ Համզոյանը



# ՀԱՅԱՍՏԱ՛ՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻ՛Ն

## ՅԵՆԳԻ ԶԱՄԱՆ

Մէ ըշկացէք ախշըրքի բանը,
Բալշէւիյն եկավ դըրից դիվանը.
Դուս եկավ հարստի ջանը,
Հա՜յ ջան զաման, յենգի զաման։

Ավալ զաման վավ վոր զուլ էր,
Իշխայը ուզէր՝ ենենց կը կուէր.
Դիվան զո՞ր էր, զարա զո՞ր էր,
Ամա՜ն, ամա՜ն, քո̈հնա զաման։

Ավալ զաման վա՞վ էր տէրը,
Իրավունքն էր խանչլի ծէրը,
Սուլթ աստված՝ թառած վէրը,
Ամա՜ն, ամա՜ն, քո̈հնա զաման։

Զաֆտած ախշըրքի խող ը ջուրը,
Պակաս չէր մէր գլխին սուրը.
Իրեանէրը մըկա քենէք մուրը,
Հա՜յ ջան զաման, յենգի զաման։

Հար լակոտը մէյ մէյ խան էր,
Ամա՜ն աստված, էտ էլ բա՞ն էր,
Էտ իշխա՞յը զարա-դիվան էր,
Ամա՜ն, ամա՜ն, քո̈հնա զաման։

Մըկը նախական կոմսոմոլ ի,
Նա քըֆատուր, նա էլ տոլ ի,
Ախպէր էտ էլ մէզի բոլ ի,
Հա՜յ ջան զաման, յենգի զաման։

Մըկը մեր ճոշն է մե բատրակ,
Բաղցր լեզու, մեղր-կարաք,
Ասի, խոսի, անի հանաք,
Հե՜յ ջան զաման, յենգի զաման։

Գզիրի հետն էլ չեր ըլի զուրցալ,
Մե բան ասեր, էլ դու պրծար,
Գöղայի աշկի փուշը դառցար,
Ամա՜ն, ամա՜ն, քöհնա զաման։

Պրծանք ըմմեն զամ-զուսայեն,
Տառնը ցավեն, «ախ» ը «վայ»-են,
Տաշնակ, հնչակ ավազակեն,
Հե՜յ ջան զաման, յենգի զաման։

1929 թ. ասել է Վաղարշապատի շրջանի վերաբնակիչ, բնիկ իգդիրեցի. 32 տարեկան Պետրոս Վարդանյանը



## ՅԵՆԳԻ ԶԱՄԱՆ

Զաման եր են զամանը,
Ընցած քöհնա զամանը,
Ո՞ւր եր դարա-դիվանը,
Զոռն ինան վոսկին եր բանը,
Ալչու յեր վարի ճանը,
Թո դուս գար խեղճի ջանը։

Զաման եր են զամանը,
Ընցած քöհնա զամանը,
Կար մե գազան թաքավոր,
Երուն խմող ըմմըն որ,
Ել յերանալ, նաչառլիկ,
Սաղ շուն ը գել ախշարք լինք.
Ել գըլավա, պըըստավ,
Գլխըներիս դառդ ը ցավ.
Բոխվա, դզիր, ըսպուչի,
Լեսնիկ, ագենտ, քöմագչի,
Ել իրխափոխ, ել ժամխեր,
Կլ քöնդխուդա, ել տերտեր,
Ցալչի, դառվուշ, դուքանչի,
Ել թիղ բացող, ել չառչի,
Ե՛ս ժամ, ես վանք, վարթըպետ,
Սաղ թալանչի, ծեծ ը պետ։

Բըշեր-ցերեկ՝ տու՜, հա տու՜,
Տղատ ծնավ—տու՜, հա տու՜,
Կնունք արիր—տու՜, հա տու՜,
Լաճ փսակիր—տու՜, հա տու՜,
Ախչիկ ճամխիր—տու՜, հա տու՜,
Մեռել մեռավ—տու՜, հա տու՜…

Սըլուգի պես երընխում,
Աշկ են տնգե չոռս յանեն,
Վավեյլայի վոր տանան,
Մե տեղ մի քինչ շիրա կա՝
Կալը ծեծիր, ըը մեղի՞,
Բաղը քաղիր, ըը մեղի՞,
Գինի գցիր, ըը մեղի՞,
Արաղ քաշիր, ըը մեղի՞,
Կովը կթիր, ըը մեղի՞,
Ցան ը փթիր, ըը մեղի՞...

Ա՛խ — վա՜յ, ամա՜ն, ամա՜ն եր.
Եա ի՜նչ ջուռա զաման եր.
Բաշքըշան եր չոռս յանեն,
Մարթ բեղար եր ուր ջանեն:

Ասել է իգդիրեցի Պետրոս Վարդանյանը, 32 տարեկան. Ներկայումս ապրում է Վաղ-պասի շրջանում:



## ՇՈՒՇԱՆԻ ՅԵՐԳԸ

Ավալ զաման Շուշանն ընկած գոնե-գուռ,
Խաց ու լվացք կըներ, պախեր ուր աքուռ.
Ե՛յ զամա՜ն, զամա՜ն,
Բանդըվես զաման:

Մանդըր յեթիմները տըկլոզ ու քաղցած,
Պազ թոնրան շուրթ, անոթի ու մխը բաց.
Վա՜յ զամա՜ն, զամա՜ն,
Բյամբըխվես զաման:

Եկավ խորհուրթային, քյասիբ աշկ եղաց,
Շուշան գնաց ժողով, խոսք վերուց խոսաց.
Ջա՜ն զաման, զամա՜ն,
Բյասիբի զաման:

Շուշանն ընտրեցին գեղի նախագա,
Թաղյան, զանգլին մե գեղ մըկա կը պախա.
Ե՛յ զաման, զաման,
Լուսավոր զաման:

Իրանց մոտիկ գեղն էլ չեր տեսե Շուշան,
Մըկա կը գըվըռի — Թիֆլիզ, Երևան.
Ջա՜ն զաման, զամա՜ն,
Ըընդիկ զաման:

Խասթուխ Շուշան մարթ ի դառցե մե խոսքով,
Ես տարի ջոկեցին, ըղըրկին Մոսկով.
Ե՛յ զաման, զամա՜ն,
Սավետի զաման:

Ես խաղը ասեր է Ղարիբի Ասոն,
Կընգա ազատըթոն մեր աշկով տըսանք.
Ջա՜ն զաման, զամա՜ն,
Կընգըտանց զաման:

1928 թ. ասել է Ախտայի շրջանի Բաղսի գյուղացի 40 տարեկան Ասոն (Ասմար) Ղարիբյանը:

## ՍԱՎԵՏԻ ՁԵՌՈՎ...

Հինը քանդվեց, նորը շինվեց՝
Սավետի ձեռով,
Հազար-հազար հիմքեր փորվեց՝
Սավետի ձեռով:

Գետերի դեմը կտրեցին,
Պատեցին զոռով.
Հիդրոկայաններ հիմնեցին,
Սավետի ձեռով:

Գեղերում կոլխոզ հիմնեցին,
Դախոթը բեռով,
Դասակարգը վերացրին,
Սավետի ձեռով:

Անջուր տեղեր ջուր հանեցին,
Կանալ ու առվով,
Ձորերով բամբակ ցանեցին,
Սավետի ձեռով:

Սովխոզ հիմնին ցանք ու տավարով,
Վոչխար ու գառով,
Քիչ տեղից շատ արդյունք առան,
Սավետի ձեռով:

Բյուրավոր դպրոց հիմնեցին,
Նոր գիրք ու բառով,
Ուսումը պարտադիր դառավ,
Սավետի ձեռով:



Թասիբ, միջակ կոլխոզ մտան,
Բուրջվան մեռավ.
Կոլխոզ աշխատանքը աճեց,
Սավետի ձեռով:

Վողջ միասիրտ աշխատանքի,
Սարով ու լեռով,
Միացած են սիրով, ուրախ,
Սավետի ձեռով:

1930 թ. առել է Կիրովականի շրջանից վոմն Դավիթ Դուլամիրյանց.

# ԿՈՒԼԱԿ, ՉԱՌՉԻ ԵՒ ՉԿԱ...

Զայդան բերեք չայ անենք,
Կուլակ, չառչի ել չկա,
Մեր գյուժինին փայ անենք,
Դաշնակ, տերտեր ել չկա:
Մեր գյուժինը սաղ ընի,
Գզիր, քյոխվա ել չկա.
Կոլխոզը գöլ բաղ ընի,
Մուրադ, Խնդո[1] ել չկա:
Կուլակ, չառչի ել չկա, դաշնակ, տերտեր ել չկա.
Գզիր քյոխվա ել չկա,—յերկիրը մերն ի մըկա:

*

Մե յար ունիմ կոմսոմոլ,
Կուլակ, տերտեր ել չկա.
Սաղ որն ինդած դաշտ ը չոլ,
Ըռես-մռես ել չկա.
Կոլխոզնիկ ջանին մեռնեմ,
Թոլջի, գզիր ել չկա.
Դարա-դիվանին մեռնեմ,
Թաղի, թուլա ել չկա:
Կուլակ, տերտեր ել չկա. ըռես-մռես ել չկա.
Թոլջի, գզիր ել չկա, աշխարքը մերն ի մըկա:
Կուլակը քուռակ դառցավ,
Ժամ, պատարաք ել չկա.
Մեր ժամը մարաք դառցավ,
Աղա, պարոն ել չկա:

[1] Մուրադ, Խնդո—դաշնակ հայտնի խմբապետներ:



Բուրջուն քշինք, հուշտ արինք,
Միրզա, սուդյա ել չկա.
Բատրակներին կուշտ արինք,
Խին ադաթը ել չկա:
Ժամ-պատարաք ել չկա. աղա, պարոն ել չկա.
Խին ադաթը ել չկա, դարվանը մերն ի մըկա:

1927 թ. ասել է Ղամարլուի շրջանի Հայ Դվին գյուղացի, 18 տարեկան Մանո Ղարիբյանը

„Մանոյի ասելով, սույն „չանիմանները“ մեկի կամ մյուսի „խանածը“ չեն, այլ կոլխոզ աշխատանքների միջոցին հորինված կոլեկտիվ ստեղծագործություն. մեկը ես է ասում, մեկը—են, վերջն իրար համարմարեցնելով ամբողջացվում է յեվ դառնում բոլորի սեփականություն“։

Ծանոթ. բանահավաքի

## ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՅՍԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Լեքտրականն եկավ մեր խավար գեղը,
Մեր խավար գեղը․
Բերին սունը տնգլին գեղի մեջ տեղը,
Գեղի մեջ տեղը․
Ա՛յ զաման, զաման,
Լենինի զաման։

Գեղը շափաղ տվեց Լենինի լուսը,
Լենինի լուսը․
Կոլխոզը կատարեց քյասըբի հուսը,
Քյասըբի հուսը․
Ա՛յ զաման, զաման,
Սոցիալի զաման։

Լուսը վոր բերին, ուրախ ի ամեն մարթ,
Ցաման ամեն մարթ․
Կոլխոզնիկաց սիրտ լման ի բացված վարթ,
Բացված կարմիր վարթ․
Ա՛յ զաման, զաման,
Ըստալինու զաման։

Լամփ ը նաֆտի ճրաք մեչտեղն թռան,
Ջան լմըն թռան․
Հենց վոր լեքտրական գեղումը վառան,
Հե՛յ ջանան վառան․
Ա՛յ զաման, զաման,
Կոլխոզի զաման։



Կանցելար-ակումբը դառցան չրաղվան,
Դառցան չրաղվան․
Ընցած սև որերը գնացին, թաղվան,
Ինչ աղեկ թաղվան․
Ա՛յ զաման, զաման,
Սավետի զաման։

Ասել է Նոր-Բայազեցի, 45 տարեկան կիսագրագետ Կաճավ Հարությունյանը:

## ՇԻՐԿԱՆԱԼԸ

Լենինից եկավ հրաման,
Կապսի կողը եկին դաժան,
Ջուր հանելու դրին դաժան,
Ասենք՝ կեցցե Շիրկանալը:

Բոմբեր, դինամիտներ բացին,
Անհունական սար ծակեցին,
Խըլղ մախլուխաթ մաթ մնացին.
Ասենք՝ կեցցե Շիրկանալը:

Շիրկանալը մեկ մուրազ եր,
Ամեն մարդ էլ էս բան կուզեր,
Բանց մեկ Արազ ջուր կը վազեր,
Ասենք՝ կեցցե Շիրկանալը:

1929 թ. առել է Լենինականի շրջանի Որթաքիլիսա գյուղացի, 18 տարեկան Նունե Նավասարդյանը:



## ՏՐԱԿՏՈՐԻ ՅԵՐԳԸ

Տրաքտորը եկավ գեղը,
Ջնջվի կուլակների ցեղը.
Բանվորի սիրտն եկավ տեղը,
Ա՜յ տրաքտոր, ջա՜ն տրաքտոր,
Մեր դարդի դարման տրաքտոր:

Տրաքտորը հասավ արտը,
Ալրի ղեկավար մարթը,
Դուշմընի մեջ ընկնի ջարթը.
Ա՜յ տրաքտոր, ջա՜ն տրաքտոր,
Դու մեր հոքի, ջա՜ն տրաքտոր:

Տրաքտորը բերավ նախադեն,
Հականեր գոներ կը փակեն,
Նախանձից դուրս չեն գա ծակեն.
Ա՜յ տրաքտոր, ջա՜ն տրաքտոր,
Դու մեր սուլթան, խա՜ն տրաքտոր:

Տրաքտորը բերավ բջիջը,
Ուրախացավ քյասիբը, խեղճը,
Քցին գործի դաշտի մեջը.
Ա՜յ տրաքտոր, ջա՜ն տրաքտոր,
Դու մեր դին, իման տրաքտոր:

Կոլխոզը բերավ տրաքտորը,
Վարեց գեղի սար ու ձորը,
Ոցը մտավ հակայի փորը.
Ա՜յ տրաքտոր, ջա՜ն տրաքտոր,
Մենք քեզի ղուրբան, տրաքտոր:

Ալագյազին դիպավ շողը,
Տրաքտորը քցին խողը,
.....կուլակի խոր կողը.
Ա՜յ տրաքտոր, խա՛ն տրաքտոր,
Շուտ արի մեյդան, տրաքտոր։

Զամուլույա դար ու փոսը,
Տրաքտոր քանց յեղ կը հոսա,
Ֆաղիրներաց աչքը լուս ա.
Ա՜յ տրաքտոր, ջա՛ն տրաքտոր,
Դու արա քո բան, տրաքտոր։

Տրաքտորն եր չորս խոփանի,
Վարի, շուռ տա, հո՛փ-հո՛փ անի,
Դաշնակը քանց չարք խափանի.
Ա՜յ տրաքտոր, ջա՛ն տրաքտոր,
Ջանս քեզ ղուրբան, տրաքտոր։

Տրաքտորը վարի, ցանի,
Հարկավոր ա ամեն բանի,
Հազար տեսակ գործեր կանի.
Ա՜յ տրաքտոր, ջա՛ն տրաքտոր,
Դու մեր սուլթան, խան տրաքտոր։

Տրաքտորը մտավ գեղը,
.....տեր Մուքոյի բեղը,
Մեկ էլ մրքի են մեջ տեղը.
Ա՜յ տրաքտոր, վա՛ր տրաքտոր,
Աշխար բերիր դար տրաքտոր։



Տրաքտորիստը կոմսոմոլ,
Վարեց, չթողեց հանդ ու չոլ,
Դաշնակ-մաշնակ՝ «հայդե պաշոլ».
Ա՜յ տրաքտոր, վա՛ր տրաքտոր,
Դու մեր հույս ու ճար տրաքտոր։

Տրաքտորը մեզ ազատեց,
Կուլակից—անհարազատից,
Ամեն տեսակ չար ու վատից.
Ա՜յ տրաքտոր, խա՛ն տրաքտոր,
Դու մեր աննման տրաքտոր։

Տրաքտորի խոփին մատաղ,
Անկներին ու թոփին մատաղ,
Տրաքտորիստ Ակոփին մատաղ.
Ա՜յ տրաքտոր, սև տրաքտոր,
Հարստներաց դև տրաքտոր։

Կեցցե Եմտսեսն ու կալոնը,
Տրաքտորների շալոնը,
Իսկը աղքատի հալոնն ե.
Ա՜յ տրաքտոր, ջա՛ն տրաքտոր,
Դու մեր սուլթան, խան տրաքտոր։

Տրաքտորն ու տրիերը,
Կոլխոզն ա ամենի տերը,
Անիծվի բուրջույի խերը.
Ա՜յ տրաքտոր, վա՛յ տրաքտոր,
Դու աշխարի թայ տրաքտոր։

Տրաքտորը մի մաշին ա,
Բոյով, բուսաթով նախշուն ա,
Շատ էլ մեծ չի, իմ յաշին ա.
Ա՜յ տրաքտոր, ջա՛ն տրաքտոր,
Նալար վերքըն սան տրաքտոր։

Տրաքտորը ցել ա անում.
Ակոսը թել-թել ա անում
Հակա՛ն փանդ ու ֆել ա անում,
Ա՜յ տրաքտոր, խա՛ն տրաքտոր,
Մաշինք բանդիվա՛ն—տրաքտոր։

Սատկավ Մանասի Սեդրակը,
Տեր Մխոյի տղա Մխակը,
Հարուստները մտան ծակը.
Ա՜յ տրաքտոր, ջա՛ն տրաքտոր,
Մեր շալիկ, թումբան տրաքտոր։

Վոնց վոր գոմշին ծովի վըրեն,
Այլապլանը՝ հովի վըրեն,
Տրաքտորը հողի վըրեն.
Ա՜յ տրաքտոր, ջա՛ն տրաքտոր,
Դու մեր դին-իման տրաքտոր։

Ասել է Արփիկի բանվորուհի, 30 տարեկան Նարգիզ Բայվերդյանը



## ԿՈՊԵՐ՛ՆԱՏԻ ՅԵՐԳԸ

Կոպերնատ բացին բաղարը,
Դուքանչոնց բունեց ադարը,
Ել չեն աշխատի խաղարը.
Ա՜յ կոպերնատ, ջա՛ն կոպերնատ։

Թաքավորը ընգավ թախտեն,
Կոպերնատը բացին Ախտեն,
Են էլ փաղիրներաց բախտեն.
Ա՜յ կոպերնատ, ջա՛ն կոպերնատ։

Կոպերնատի դռները բաց,
Շառոյի տղա, տու նատի լաց,
Դուքանչիքը մացին քաղցած.
Ա՜յ կոպերնատ, ջա՛ն կոպերնատ։

Բարեն ասավ ես քանի տող,
Կոպերնատ ի մեզ ազատող,
Հարստներաց գլխին թափավ խող.
Ա՜յ կոպերնատ, ջա՛ն կոպերնատ։

Ասել է Ախտայի շրջանի Վերին Ախտա գյուղացի, 40 տարեկան Բարե (Բարաղամ) Մելքոնյանը։

★

Բալշևիկ ջա՛ն, բալշևիկ,
Գլխիտ հեյրա՛ն, բալշևիկ.
Քո որով է, վոր տաանք՝
Մե խանգխա, ջա՛ն բալշևիկ։
Սմար եյանք տեղերըս,
Կա ոթևան—բալշևիկ,
Կարմիր արևը եյավ,
Բացեց հավա՛ն, բալշևիկ։
Կոլխոզն ըմմընխս ավեց
Խաց ը կթա՛ն, բալշևիկ.
Հմմեն բա՛ն բոլ ը բոլղա՛ն,
Մեզի կտա՛ն, բալշևիկ։
Եկար մեզի խաքուցիր
Շապիկ-թումբա՛ն, բալշևիկ.
Բալշևիկ ջա՛ն, բալշևիկ,
Ջանիդ ղուրբա՛ն, բալշևիկ։

Ասել է Վաղարշապատի շրջանի վերաբնակիչ, բնիկ Իգդիրեցի, 32 տարեկան Պետրոս Վարդանյանը:





# ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԿՅԱՆՔ

## ԸՍՏԱԼՈՒ ԿՈԼԽՈԶԸ...

Ըստալու կոլխոզը,
Ըստալու կոլխոզը.
Վով կոլխոզը չի սիրա՝
Թող կտրվի վիզը:

Նախակէն բարակ ի,
Նախակէն բարակ ի.
Վով կոլխոզը չի ուզի՝
Թող փորը տրաքի:

Ըստալու քնծպով,
Ըստալու քնծպով,
Վով կոլխոզը չի մտնի՝
Թող վառվի կրակով:

Կոլխոզ բրիգադ ի,
Կոլխոզ բրիգադ ի,
Ըստալու խրատով՝
Գրվանք սաղ բրիգադի:

Ինչ վոր տանն--սութ ի,
Կոլխոզը ոքութ ի,
Ումուդ Ըստալին կասի՝
«Աշխատողը կուտի»:

Ասել է Վերին Ալիսափի բնակիչ 25 տարեկան Թագո Նանապետյանը

## ԿՈԼԽՈԶ

Մենք կազմել ենք կոլխոզը,
Թող մտնի ում սիրտ կուզի։

Լենինի խոսքումն եկավ,
Բոսիբի սրտումն եկավ։

Նոա Սովետի զակոն,
Մեռնիմ Ստալինու խոքուն։

Եվ հարուստ, աղքատ չկա,
Խավարական ա մըկա։

Վով աշխատի — են ուտի,
Կոլխոզ մեզի օքութ ի։

Առել է դամարլուեցի, 21 տարեկան, Միրուս Հովա-
նյանը: Երգը սովորել է իր ընկեր կոլտնտեսականներից



## ԿՈԼԽՈԶՆԻԿԻ ՅԵՐԳԸ

Յես խին խելքի չեմ, նոր եմ,
Կոլխոզի բաղ կը փորեմ,
Բաղ ը բաղչա, բարը շատ,
Դաշտ ը արոտ, վարը շատ։

Հարվածային գործ կանեմ,
Շատ կաշխատեմ, փորց կանեմ,
Աշխատանքը վաղ ընի,
Իմ աշխորը սաղ ընի։

Բոսիբ, դու լավ մըտածի,
Վով կորցրեց, թող լացի,
Մեզի կոլխոզը լավ ի,
Շատ արթար ու իրավ ի։

Առ ը Նամուս ունենք մենք,
Լավ, զերյաթով բանենք մենք,
Խեղճ ը կրակ ախկատը,
Ղամ-ղըսայն խանենք մենք։

Առել է [illegible] ,57 տարեկան Սահակ [illegible]յանը

## ԿՈԼԵԿՏԻՎԻ ՑԵՐԳԸ

*Կոլեկտիվ ջան, կոլեկտիվ,*
*Աշխատի, կեր—պույրդ հաշիվ.*
*Գործդ բարաթ ճանչըցի,*
*Վոնչ քաշքշոց, վոնչ կռիվ։*
*Առաջվա պես մենակ չես,*
*Բոմադ ունես դու անթիվ.*
*Թե դեյրաթով աշխատես,*
*Կստանաս ըմեն ինչ լրիվ.*
*Թամբալ-լոդր վոր չինես,*
*Կստանաս հարգանք, պատիվ։*

*Կոլեկտիվ ջան, կոլեկտիվ,*
*Ըմեն ինչդ լիք ը բոլ.*
*Ով առաջ չարոխ չուներ,*
*Մկա ունի սապոգ, սոլ...*
*Ով վոր փախնի կոլխոզեն,*
*Ծակի ինի սար ը չոլ.*
*Մտեք կոլխոզ իշքան կաք՝*
*Կուսակցական, կոմսոմոլ.*
*Կուլակ, անձեն տեղ չունեն,*
*Եսպեսները—դե՛ պաշոլ...*

Ասել է Ոսականի վերաբնակիչ, բնիկ Մակուի շրջանի Բիսմիս-Թափա գյուղացի 35 տարեկան սեփագործ բանվոր Վազիր Ղազոյանը։



## ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՑԵՐԳԵՐ

*Կոլխոզումը արտ ունեմ,*
*Յար, յար.*
*Կոլխոզումը դարդ չունեմ,*
*Յար, յար.*
*Ել իմ դարդ ու ցավս ի՞նչ ա,*
*Վոր քեզի պես մարդ ունեմ,*
*Յար, յար.*

*Ինչի՞ ընկնեմ սար ու չոլ,*
*Յար, յար.*
*Կը նստացնեմ բաժկի քոլ,*
*Յար, յար.*
*Ել իմ հոքսը-ցավս ի՞նչ ա,*
*Աշխոր ունեմ բոլ ը բոլ,*
*Յար, յար։*

*Կոլխոզի բարին մատաղ,*
*Յար, յար.*
*Տրաքտորի վարին մատաղ,*
*Յար, յար.*
*Հետս մի տեղ դատող-բանող*
*Կոլխոզնիկ յարին մատաղ,*
*Յար, յար։*

Ասել է դամարլուեցի 21 տարեկան անգրագետ Սիրուշ Զրվանյանը։ Երգը սովորել է իր ընկեր կոլտնտեսուհիներից։

## ԿՈԼԽՈԶԻ ՑԵՐԳԸ

Արևը ալին ա,
Բուլաշը կալին ա.
Մեր կոլխոզը փառ ու փառաշ,
Դրախտի հալին ա։

Ջինվորը վաշտումը,
Գյուղացին դաշտումը.
Մեր կոլխոզի հալը լավ ա,
Հացը բոլ տաշտումը։

Ժամ ու վանքից պրծանք,
Բեգը կյանքից պրծանք,
Կոլխոզնիկի հալը լավ ա,
Պար ու պարաքից պրծանք։

Բեխվա, մեծից պրծանք,
Ծանդր լծից պրծանք.
Զքավորի ջանը ազատ,
Ծեր ու ծեծից պրծանք։

Ասել է 50 տարեկան կիսագրագետ բանվոր (Արթիկում), վանեցի Սաֆար Մելքոնյանը.



## ԿՈԼԽՈԶԸ

Տեսեք կոլխոզի խմբակը
Վորքան գեղեցիկ է, ընկեր,
Հիանալի աշխատանքը
Մեղրից անուշիկ է, ընկեր։

Միշտ զտած սերմեր են ցանում,
Մաշինայով հունձ են անում,
Ուրախ, զվարթ կալ են տանում,
Վորքան անուշիկ է, ընկեր։

Արա կալ ծեծող մաշինան,
Չկա մի բան նրա նման,
Ասլան-Ղափլանի նման,
Կրանող գազան է, ընկեր։

Արար ու աշխարհ զարմացավ,
Հարուր սել քուլաշը կերավ,
Հազար փութ ցորեն դուս տվավ,
Կեցցեն կոլխոզները, ընկեր։

Ասել է Աշտարակի շրջանի Կարաչամբերան գյուղացի 45 տարեկան, հասանդյան հազիվ գրագետ Հակոբ Գալոյանը

## ՀԱՐԲՐԱՆ

— Հարբրան,
— Ջանե ջան։

Կոլխոզնիկ եմ, վար կանեմ,
Ցես իմ գլխիս ճար կանեմ.
Անհամ, անճար կը մեռնես,
Խոզը կլխու տար կանեմ։

— Հարբրան,
— Ջանե ջան։

Ցես իմ գործով տարված եմ,
Կուլակին կը հարված եմ.
Հակա, դաշնակ, խըմբապետ,
Կորեք թամըղ իրար խետ։

1932 թ. ասել է Կոտայքի շրջանի Գողթ գյուղի վերաբնակիչ, բնիկ Նոր-Բայազետի շրջանի Բաշքենդից գյուղացի, կոլտնտեսության անդամ 27 տարեկան Չիլչիլ Առաքելյանը



## ԱՐԵՔ ԵԹԱՆՔ...

Արեք եթանք բըժարի,
Հես գինաս եք դժար ի.
Էլ են ընցավ ու ընցավ,
Էլ մեհ չունենք դարդ ը ցավ։

Վավ վոր փախնի, բան չանի,
Ուր ջան իկյա խանչալի.
Էլ են ընցավ ու ընցավ,
Էլ մեհ չունենք դարդ ը ցավ։

Բամբակը չանաք անենք,
Խաղ ասենք, հանաք անենք.
Էլ են ընցավ ու ընցավ,
Էլ մեհ չունենք դարդ ը ցավ։

Բամբակը քյոլ-քյոլ անենք,
Շատ ժողեք բոլ-բոլ անենք.
Էլ են ընցավ ու ընցավ,
Էլ մեհ չունենք դարդ ը ցավ։

Ասել է Ղամարլուի շրջանի Հայ Դվինի գյուղացի, 1? տարեկան, կոլտնտեսության անդամ Մանո Ղարիբյանը

„Մանոյի ասելով—սույն „չանիմանները" մեկի կամ մյուսի „խանածը" չեն, այլ կոլտնտեսական աշխատանքների միջոցին նորհնված ընդհանուր ստեղծագործություն. մեկը ես է ասում, մեկը—են. վերջը իրար համարեցնելով „լերգն ամբողջացվում է յեվ դառնում բոլորի սեփականություն"

Ծանոթ. բանահավաքի։

## ԲԱ՛Ն ՉՈՒ՛ՆԵՍ...

Ժողվենք բամկի քուլաները, յա՛ր, յա՛ր,
Հա թո խաչեն թուլաները, բա՛ն չունես։
Ժողվենք բամկի ղոզաները, յա՛ր, յա՛ր.
Հա թո խաչեն մազաները, բա՛ն չունես։
Մեր դուրմանը թող շըփ-շըփա, յա՛ր, յա՛ր,
Մեր դուշմանը թող թոթըփա, բա՛ն չունես։
Բամբակը տանք Ֆաֆրիկային, յա՛ր, յա՛ր,
Բուրջուչ գլխին թափենք դայան, բա՛ն չունես։
Աշխար գնեն ադեկ խելք ի, յա՛ր, յա՛ր,
Աշխարը կա, մե քշեւք ի, բա՛ն չունես։

Ասել է Ղամարլուի շրջանի Զոհրաբլու գյուղացի 16 տարեկան կոլտնտեսուհի (կոմերիտուհի) Փառո Շահբազյանը.



## ԱՐԱ՛ՆԻ ՋՈՒՐԸ...

Արանի ջուրը տաք ա,
Ձեռքիս պողպատ ուրաք ա.
Յոլդաշ Հասան, արի գնանք բամբակը,
Արի գնանք, թող պաղավի կուլակը։

Ուրաքը սրած պիտի,
Բամբակը ջրած պիտի.
Յոլդաշ Ֆաթմա, արի գնանք բամբակը,
Արի գնանք, թող կատաղի կուլակը։

Բանդ. ոլդում քոլլարկնդա,
Հնգեր Կարո, գեղակ փամբուկ քախանա,
Քոռ ոլսուն գյոզլարի քեշ բախանա։

Բիր ջութ բաղբանդ ոլայդըմ,
Յարըմըն կոլլարընդա.
Հնգեր Մարո, գեղակ կոլխոզ յոլընա,
Կուրբան ոլըմ կայմաթընա, կոլընա։

Ասել է Վեդիի շրջանի Դավալու գյուղացի, 17 տարեկան, կոլտնտեսության անդամ Ռեֆիկ Ադամյանը

## ԿՈԼԽՈԶ, ՍՈՎԽՈԶ, ԿՈՄՈՒՆԱ...

Ցես ախչիկ եմ, ալ կուզեմ,
Գլխիս Թիրմա շալ կուզեմ.
Կոլխոզ, սովխոզ, կոմունա,
Մենք ուզել ենք, թո մընա:

Ես քըշեր լուսնակ քըշեր,
Ջունն եկե, գետին նախշե.
Կոլխոզ, սովխոզ, կոմունա,
Հաստատ մընա, թո մընա:

Գլուխս կուրբան կանեմ,
Սև ունքեր, կարմիր թշեր.
Կոլխոզ, սովխոզ, կոմունա,
Աշխարք պահի, թո մընա:

1933թ. ասել է Ղամարլուի շրջանի Ջոհրաբլու գյուղացի, 16 տարեկան կոլտնտեսուհի—կոմյերիտուհի Փառա Շահբազյանը:



## ԳԻՅԱՆ ԽԱՉՈՆ ԿՈԼԽՈԶՈՒՄ

Գիյան Խաչոն կոլխոզ մտավ.
Աշխատանքի վախտը եկավ.
Թե՝ գործ տվեք ընձի գո̈րա:
Ասին—մաճ բռնի, վա̈ր արա:
—Չէ, գործ տվեք ընձի գո̈րա:
Ասին—քըլա մարկոս արա:
—Չէ, գործ կուզեմ ընձի գո̈րա:
Ասին—բախ առ, եքի փորա:
—Տո՛ չե, մե գործ ընձի գո̈րա:
—Ես ունձ, ես խոտ, յա ջուր արա...
—Չէ, ջանըմ, գործ ընձի գո̈րա:
Քելա ցախի,
Տավար պախի,
Բոստան շախի,
Միլաղ կախի:
—Տո՛ չե, մե գործ ընձի գո̈րա...
Խաղող քաղի...
—Ե՜ է է, հասանք գործ՝ ընձի գո̈րա:
Բաս գընա ամբար,
Գինի խըմի,
Խարփի, քընի...
—Շնորհակալ եմ՝
Ա՛յ, էտ գործն ի ընձի գո̈րա...

Ասել է Ղամարլուի շրջանի Բաշքենդ գյուղացի, 5 տարեկան Սուսամբար Գաբրիելյանը

# ՆՈՐ ԿԵՆՑԱՂ

## ԽԻ՛ՆԸ Գ՛ՆԱՑ, ՆՈՐԸ ԵԿԱՎ...

Մե յար ունեմ մանիշակի ծաղիկ ի,
Նուշ ը նաբաթ, խնձորն ել աղեկ ի.
Խինը գնաց, նորը եկավ, Անուշ ջան,
Մեր քաղցրիկ որը եկավ, Անուշ ջան:

Մե յար ունեմ լման ըռհան-մարղայի,
Վարթի ծաղիկ կոկոմե ել թազա ի.
Խինը գնաց, նորը եկավ, Կարո ջան,
Մեր ապրելու որը եկավ, Մարո ջան:

Մե յար ունեմ քանց կարաքը խամեղ ի,
Ծիվար-միվար միամիտ ի, անմեղ ի.
Խինը գնաց, նորը եկավ, Վարսո ջան,
Մեր կոլխոզի որը եկավ, յարո ջան:

Ասել է Ղամարլուի շրջանի Հայ Դվինի գյուղացի
18 տար.կան Մանո Ղարիբյանը:

## ՀԻՆ ԱԴԻԱԹԸ

*Հերն ախչկանը կտար մարթի,*
*Իրարու չէն տեսնի զաթի.*
*Բա սանք, ես էլ ադա՛թ է,*
*Բու է թե չիլ է, դարուլ է։*

*Մե քաֆթառ, վոր ունենար փող,*
*Կառներ ախչիկ, իրեսին քող.*
*Տարին անցներ—կմտներ հող,*
*Բու է թե չիլ է, դարուլ է։*

*Ո՞վ էր նայում լաց ու թացին,*
*Փող չունի՝ չէն տա սիրածին.*
*Ումն էլ վոր տան մաղ կարածին,*
*Բու է թե չիլ է, դարուլ է։*

Ասել է Կիրովականի շրջանի Կողբ գյուղացի Սողո Մելիքյանը։ Երգի հորինողն անհայտ է։



## ԷԼ ԻՃ ԿԱՆԵՄ...

*Էլ իճ կանեմ կուրը,*
*Տղաս կտամ մուրը։*
*Ուրքիս կոթը վարաղ է,*
*Կեթամ կոլխոզն ալաղի։*
*Աշխոր կանեմ, ինձ կանեմ,*
*Կեթամ կոլխոզն հունձ կանեմ։*
*Սաղ դաշտերը բամբակ է,*
*Կեթամ կոլխոզ չանաքի.*
*Ջանաք կանեմ չոսը փութ,*
*Հես գինասեք հանձք է։*
*Ջայեն բերին կամիշը,*
*Եթանք փանեք չամիշը։*
*Նա շինածդ թախտն է,*
*Եքու խոտի վախտն է։*
*Բանեք, աշխոր շատ ըլի,*
*Վոր մեր սիրտը դատդ ըլի,*
*Կոլխոզը արադ ըլի,*
*Կուլակը բարբադ ըլի...*

Ասել է Ղամարլուի շրջանի Հայ Դվին գյուղացի 18 տարեկան Մանո Ղարի-յանը։

★

*Լենինյան ա, Լենինյան ա յարըս,*
*Զոլի կաքավ, աննըման ա յարըս։*

*Կոմսոմոլ ա, Լենինյան ա յարըս,*
*Սարի ջեյրան, աննըման ա յարըս։*

*Բոլշևիկ ա, Լենինյան ա յարըս,*
*Զոլի ջեյրան, ղահրաման ա յարըս։*

*Կարմիր աստղով Լենինյան ա յարըս,*
*Բըրիգադ ա, աղիզ ջան ա յարըս։*

*Կոմսոմոլ ա, Լենինյան ա յարըս,*
*Կարմիր բանակ բոլշևիկ ա յարըս։*

*Լենինյան ա, աղիզ ջան ա յարըս,*
*Բեզը շեկ ա, բոլշևիկ ա յարըս։*

*Ակտիվիստ ա, կոմունիստ ա յարըս,*
*Լենինյան ա, կոմունիստ ա յարըս։*

*Լենինյան ա, Լենինյան ա յարըս,*
*Կոմսոմոլ ա, կոմունիստ ա յարըս։*

Ասել է Աշտարակի շրջանի Բյուրականի գյուղացի
17 տարեկան Նազիկ Խաչատրյանը։



## ՉԵ՛Մ ԱՌ՛ՆԻ...

(Ծանր պար)

*Երկեն գոմը սալել եմ,*
*Ալ ձին մեջը կապել եմ.*
*Չեմ առնի, չեմ առնի կուլակի տղին,*
*Են տգեղին՝ երկեն բեղին...*
*Կառնեմ կոմսոմոլ տղին,*
*Բալլա ցեղին, կնգած բեղին։*

*Ալ ձին ի՜նչ անի նալը,*
*Կաշանգն ի՜նչ անի խալը.*
*Չեմ առնի, չեմ առնի չարչու տղին,*
*Կարմիր քթին, թուշը դեղին.*
*Կառնեմ կոմունիստ տղին՝*
*Խելքը տեղին, տերը գեղին։*

*Մ՚տա ետ տունը, մուխ եր,*
*Մինթանուս թներ թուխ եր.*
*Չեմ առնի, չեմ առնի տերտերի տղին,*
*Ժամ ասողին, մոմի գողին.*
*Կառնեմ նախագի տղին՝*
*Են համեղին ու անմեղին։*

Ասել է Ղամարլուի շրջանի Աղբաշ գյուղացի
22 տարեկան Նունիկ Խաչատրյանը։

## ՋԱ՛Ն ԳՅՈՒԼՈՒՄ...

Մի յար ունեմ բալշևիկ,
Ջա՛ն գուլում, ջա՛ն, ջա՛ն,
Ըմեն տեղ ել հիշելիք,
Ջա՛ն ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն.
Ինք կաշխատի, զինք կուտի,
Ջա՛ն գուլում, ջա՛ն, ջա՛ն։

Մի յար ունեմ կոմսոմոլ,
Ջա՛ն գուլում, ջա՛ն, ջա՛ն,
Թուխա ը նկար, գիրքը բոլ,
Ջա՛ն ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն։

Մի յար ունեմ կոմունիստ,
Ջա՛ն գուլում, ջա՛ն, ջա՛ն.
Զունի պազար ու հանգիստ,
Ջա՛ն ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն.
Որը գրի խայիր լիստ,
Ջա՛ն գուլում, ջա՛ն, ջա՛ն.
Գեղի մեջ շատ ի խիստ,
Ջա՛ն ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն։

Մի յար ունեմ պարտիզան,
Ջա՛ն գուլում, ջա՛ն, ջա՛ն,
Գործեր ունի զանազան,
Ջա՛ն ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն։
Ընձմեն շատ սիրալի,
Ջա՛ն գուլում, ջա՛ն, ջա՛ն,
Կոլխոզնիկ ի ժրաջան,
Ջա՛ն ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն։



Մի յար ունեմ կոլխոզնիկ,
Ջա՛ն գուլում, ջա՛ն, ջա՛ն,
Բանվոր, խելոք, գեղեցիկ,
Ջա՛ն ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն.
Ըսկի բանս պակաս չի,
Ջա՛ն գուլում, ջա՛ն, ջա՛ն,
Դուռ ը տունըս բոլ ու լինք,
Ջա՛ն ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն։

Մի յար ունեմ հարվածային,
Ջա՛ն գուլում, ջա՛ն, ջա՛ն,
Վոնչ անկիրթ ի, վոնչ խային,
Ջա՛ն ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն.
Ոզգա մարթի չի լսի,
Ջա՛ն գուլում, ջա՛ն, ջա՛ն,
Բալշևիկ ի շատ կային,
Ջա՛ն ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն։

1931 թ. ասել է Ղամարլուի շրջանի Ջոնրաբլու գյուղացի 16 տարեկան կոմյերիտուհի Փառո Շահբազյանը։

## ՄԱՐԵ ԽԱԹՈՒՆ

*Մարե խաթուն,*
*Խանում խաթուն.*
*Հերիք գործից*
*Կտրվես դուն.*
*Կոլխոզ ցանե*
*Դաշտեր բիթուն,*
*Մեկ յան կառտոֆ,*
*Մեկ յան թութուն...*
*Ելի, մեկտեղ*
*Եթանք դաշտեր՝*
*Քախան աննենք*
*Մեկ յես, մեկ դուն:*

*Անբան մնալ՝*
*Լավ չի մարթուն.*
*Գիշեր, ցերեկ*
*Ընկած ես տուն...*
*Դու ջահել ես,*
*Խելքդ գարթուն.*
*Արի կոլխոզ՝*
*Աշխատիր դուն.*
*Աշխոր արա,*
*Բեր լից քո տուն,*
*Կեր, քեֆ արա,*
*Տարին բիթուն...*

Ասել է 26 տ. գրաճանաչ Նունիկ Պողոսյանը:



## ՀՈՎ Ը ՀՈՎ Է...

*Ջաղացի դուռը տարթ ա,*
*Կտուրը լիքը մարթ ա.*
*Հով ը հով է, վարթի քով է յարը,*
*Վարթի քով է, կոմսոմոլ է յարը:*

*Հրես եկավ իմ յարը,*
*Գոքնոցը լիքը վարթ ա.*
*Հով ը հով է, վարթի քով է յարը,*
*Վարթի քով է, կոմսոմոլ է յարը:*

*Գութանը հաց եմ բերել,*
*Բերանը բաց եմ բերել.*
*Հով ը հով է, վարթի քով է յարը,*
*Ծաղկի քով է, կոմսոմոլ է յարը:*

*Տես--քեզ ենքան եմ սիրում,*
*Զկնով տապկած եմ բերել.*
*Հով ը հով է, ծաղկի քով է յարը,*
*Ծաղկի քով է, կոմսոմոլ է յարը:*

1933 թ. ասել է Ղամարլուի շրջանի Աղասավան գյուղացի 55 տարեկան քրդուհի Մալաք Մնո Ղզին: „Տիրապետում է հայերեն լեզվին, գիտե բազմաթիվ „ջանիմաններ“ թե հայերեն յեվ թե քրդերեն“:

Ծանոթ. բանահավաքի:

## ԿՈԼԽՈԶԻ ԱՂՋԻԿԸ

—Սիրո՛ւն աղջիկ, քեզ սիրեցի
Կոլխոզի կալում.
Ինչո՞ւ չես գալիս, գնանք Զագսը,
Ա՛յ դու չար գալում:

—Յես քեզանից լավն եմ սիրել,
Ա՛յ դմբո տղա.
Զագս եմ գնալու նրա հետ,
Եսոր կամ վաղը:

—Նա բատրակ ա, յես ոչաղ եմ,
Թո՛ղ, ինձի խոսք տուր.
Դու ես պետք ա լավ հասկանաս,
Ա՛խ, նա ո՛ւր, յես ուր:

—Նա բատրակ ա հարվածային,
Պարզ ու սիրտը բաց.
Դու կուլակի տղա յես ծույլ,
Նենգ ու ծածկված:

—Վա՜յ քեզի պես աղջիկը մեռներ,
Մեր ջանն ազատվեր...

—Վա՜յ քեզի պես տղան մեռներ,
Կոլխոզն ազատվեր:

Ասել է Ղամառլուեցի 21 տարեկան Իրուշ Զովանյանը:



## ԲԱՄԲԱԿՆԵՐԻ ՔԱՂԱՆ...

Դուն սարերի ջեյրան,
Ըլնիմ քեզի հեյրան,
Ցե՞րի ես խոսկ տալիս՝ միասին
Եթանք բաղը սեյրան.
Բամբակների քաղան, ծիրանների բարըն,
Սանդալներըդ ո՞վ ի կարե, իմ կոլխոզնիկ յարըն:

Սարերի կաքավն ես,
Դուն չոլերի հավն ես,
Ընձնե ձեռ չես վերցնում,
Ինչուն ենքան լավն ես.
Բամբակների քաղան, ծիրանների բարըն,
Շալ կուռտիկդ ո՞վ ի կարե, իմ կոմսոմոլ յարըն:

Մեռնեմ դոշիդ ԿԻՄ-ին,
Մեռնեմ սաղիդ սիմին,
Ցե՞րի պետք ի քո խերըտ դառնա
Իմ խորըս խնամին.
Բամբակների քաղան, ծիրանների բարըն,
Սապոքներըդ ո՞վ ի կարե, իմ բրիգադ յարըն:

Ըստացա նամակդ,
Իմացա ամադդ,
Ճամփեքը ծաղիկ կը փռեմ
Եկած ժամանակդ.
Բամբակների քաղան, ծիրանների բարըն,
Կոմունարկադ ո՞վ ի կարե, իմ փեշաքա՛ր յարըն:

Ասել է Ղամառլուի շրջանի Գետաշեն գյուղացի 18-
տարեկան Միռուշ Բաղալյանը:

*

Հավան չեմ քեզի, ա՛յ տղա,
Հավան չեմ քեզի.
Դու ինչի՞ տեր ես, ա՛յ տղա,
Դու ինչի՞ տեր ես.
Ընկա սար ը ձոր, ա՛յ տղա,
Ընգա սար ը ձոր.
Ծարի կոմսոմոլ, ջա՛ն տղա,
Սիրի կոմսոմոլ:

Ոչ խելք ունես դու, ա՛յ տղա,
Ոչ էլ մի ուսում.
Դարտակ կարաս ես, ա՛յ տղա,
Դրուստ եմ ասում.
Ընգա սար ը ձոր, ա՛յ տղա,
Ընգա սար ը ձոր.
Ծարի կոմսոմոլ, ջա՛ն տղա,
Առի կոմսոմոլ:

Տախտակյա բարակ, ա՛յ տղա,
Գըլուխդ դդում.
Ինչքան նասյաթ տան, ա՛յ տղա,
Մեչը չի մտնում.
Ընկա սար ը ձոր, ա՛յ տղա,
Ընկա սար ը ձոր,
Ծարի կոմսոմոլ, ջա՛ն տղա,
Առի կոմսոմոլ:

Յարըս կոմսոմոլ, ա՛յ տղա,
Էս չի՞ քո թայը,
Բելի խաղա հոլ, ա՛յ տղա,



Գըլխիտ գա վայը.
Ընկա սար ը ձոր, ա՛յ տղա,
Ընկա սար ը չոլ,
Ծարի կոմսոմոլ, ջա՛ն տղա,
Առի կոմսոմոլ:

Առել է Վաղարշապատցի վերաբնակիչ, բնիկ Իգդիրցի 55 տարեկան Սանամ Մանուկյանը:

## ★

(ժող. պարերգ)

*Աստված ծառի բար եմ յես,*
*Կոլխոզնիկի յար եմ յես։*

*Փեյվաստ ծառի բար եմ յես,*
*Կոմսոմոլի յար եմ յես։*

*Սաս բախչի բար եմ յես,*
*Կոմսոմոլի յար եմ յես։*

*Բոյով սալբի ծառ եմ յես,*
*Տրաքտորիստի յար եմ յես։*

*Վարթի քոլի գöլ եմ յես,*
*Ընձ ուզողին դուլ եմ յես։*

Ասել է Ղամարլուի շրջանի Գետաշեն գյուղացի կոլտնտեսության անդամ, 18 տարեկան Սիրուշ Բադալյանը:



## ԵՏ ՅԱՆԸ ՍՈԼ Ի...

*Ետ յանը սոլ ի, են յանը սոլ ի,*
*Մե յար եմ սիրե, թունդ կոմսոմոլ ի։*

*Ետ յանը թեփ ի, են յանը թեփ ի,*
*Մե յար եմ սիրե, գլուխը կեպի։*

*Ետ յանը սինի, են յանը սինի,*
*Մե յար եմ սիրե, ակղոմը անդլին ի։*

Ասել է Ղամարլուի շրջանի Աղբաշ գյուղացի 22 տարեկան Նունիկ Խաչատրյանը.

# ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ ՅԱՐԸՍ...

Ախչի՜, անունըդ Մանի,
Ճակատդ բոլոր շանի.
Կարմիր բանակ յարըս բաշվելիկ ա,
Կը թամամի հեղա աշունք, կը՛գա.
Արի ինձի մե պաչ տու,
Աստված ախպերըդ պահի.
Մեր դուշմանը դառնա թիքա-թիքա,
Կարմիր բանակ յարըս
Բաշվելիկ ա:

Ուռի ծառը բարցր ա,
Սրտավ սիրած քաղցր ա.
Կարմիր բանակ յարըս բաշվելիկ ա,
Բաշվելիկ ա, հեկող աշունն կը՛գա:
Բելա նանիս խաղըրա,
Թե վոր չի տա, փախցըրա.
Պալող քըդակ յարըս բաշվելիկ ա,
Կը թամամի գա բանակից կը՛գա:

Ախչի՜, անունըտ Թելլի,
Ասկ ու սոյով ես բելլի.
Թող դաշնակը դառնա թիքա-թիքա,
Կարմիր բանակ յարըս բաշվելիկ ա:

Կարմիր բանակ յարըս բաշվելիկ ա,
Կը թամամի եկող աշունք, կը՛գա:

Ասել է Ախտայի շրջանի Սոլակ գյուղացի, 18 տարեկան Անուշ Գալստյանը:



# ՆԱԽԱԳԱՀ

Մեր գյուղխորհրդի նախագահ
Գլավայի ունի խասյաթ.
Եվ խաբար չի, վոր Լենինը
Մեզի տեսես չի տվել նասյաթ:

Ասել է Կոտայքի շրջանի Թեջրաբակ գյուղի վերաբնակիչ, բնիկ Նախիջևանի Աղնաբերդ գյուղացի, 55 տարեկան, Յեղիսաբեթ Ավագյանը:

# ԲԱՌԱՐԱՆ

## Ա.

Աբաղ—չեն, ծաղկած
Աբեշչիկ—անտառապահ, об'езчик
Աբուս—պատիվ, ամոթ
Ագաթ—սովորություն, ձեւ
Ագզա-բուղզա—հատ ու կենտ. փայլփլերս, անկանոն
Ազար—ցավ, հիվանդություն
Ազզուն—լիրբ, ճարպիկ
Ալագյող—գեղաչյա
Ալաղ—քաղհան
Ալամ աշխարհք—վողջ աշխարհ
Ալբխալ—անմիջապես, շուտ, շտապով
Ալչու—վեգի փոս կողմը աջղակ
Ալվալա—վառ կարմիր
Ախտիվիստ—ակտիվիստ, активист
Ահլ—ահել, տարիքավոր
Աղեկ—լավ
Ամագ—խնամք, հոգատարություն. յերախտիք
Ամմա—բայց, սակայն
Այար—յեթե, թե վոր
Աննամուս—անպատիվ, անբարոյական
Աշխեթ—չալ, խատուտիկ
Աշկյարա—ակնհայտ
Առ ը նամուս—պատիվ-բարոյականություն
Ասլան-ղափլան—հեքիաթային ամենակարող, ահեղի շներ
Ասկ ու պետ—ազգ ու ցեղ
Ասնավուրք—հայամավուրք
Ավազ—ի տեղի, փոխարեն
Ավալ—առաջ, հնում
Արան—հարաթվայր, դաշտ
Աֆիցար—սպա, офицер

## Բ

Բար—հարմար. համահավասար
Բարա—հայր. պապ
Բարաթ—բավականաչափ, բավարար
Բալշուրիկ—բոլշևիկ
Բալլու—հայտնի, ակնառու, աչքի ընկնող
Բախչանի—այգիներ, այգեստան
Բասս—խոսք. զրույց. բամբասանք
Բար—պտուղ, բերք
Բարբադ—ավեր
Բարև—գոնե
Բաֆա—հերթ, արեթ. հույս
Բե իլղար—յերդմնազանց, ուխտադրուժ
Բեյլի—տես՝ բալլու
Բեհուդա—անմիտ
Բենամուս—անբարոյական, անպատիվ
Բղել—խթել
Բըժար—քաղհան
Բըրխդադ—խումբ
Բըրթել—մանրել, կտոր-կտոր անել
Բող—սպիտակավուն
Բոլ ը բոլղան—լիառատ
Բոշ—դատարկ. ավելորդ. զուր
Բուղալա—ջահել, պատանի

## Գ

Գաթի ծաղիկ—ծաղկի տեսակ
Գյարմաշա—ճիպոտի տեսակ
Գյաղան—թիկունք. մարմին
Գյաչադ—լուծողական բույս
Գյա—հրեն, ահա
Գյորա—համեմատ, համապատասխան
Գյորք—կերպարանք
Գյուլբաղ—ծաղկավետ այգի
Գյուլլա—գնդակ
Գյուման—հույս, սպասելիք
Գյունաբախան—արևածաղիկ

## Դ

Դախոթ—յեկամուտ, доход
Դար—դրա. նրա
Դարա-դիվան—դատ և դատաստան



Դարբեղար—թափառական
Դարվան—հրապարակ, ասպարեզ
Դաղ—այնտեղ
Դանգ ը սար—գլխացավանք, ձանձրույթ
Դափ—դահիրա
Դեխ—դեպի
Դիդար—կերպարանք
Դին ու իման—հավատ ու խիղճ
Դիվան—դատաստան
Դիփ—վողջ, բոլոր
Դոշ—կուրծք
Դովլաթ—ունեցվածք, հարստություն, կայք
Դոր—վորտեղ
Դորես—այսուհետև, այնուհետև
Դուդուզ—շվի
Դուզ—ուղիղ, հարթ
Դուրան—ուղիղ, հարթ
Դուխեթ—այս անգամ

## Զ

Զաթի—հենց
Զալ—դահլիճ, зала
Զալփ—համազարկ
Զալում—խիստ չար, անողոք
Զահմաթ—նեղություն
Զաման—ժամանակ
Զանգին—հարուստ, ունևոր
Զարբ—զոռ-ուժ
Զար—նարդախաղի վոսկրյա խորանարդները. հաջողություն
Զավթել—խլել, բռնագրավել
Զըռ—բռի, անտաշ, կոպիտ
Զըվռել—շրջել, զբոսնել, թափառել
Զիան—վնաս
Զիլ—ուժգին
Զիլաֆ—աչքաբաց, ճարպիկ
Զմեն—վողջ, բոլոր
Զոզան—ամառանոց
Զոռբա—ուժեղ. հարուստ
Զուռյաթ—սերունդ
Զրինգ—առույգ

**Ե**

Եքի—այգի

**Ը**

Ըշկալ—նայել, դիտել
Ընձի—ինձ
Ըազվեդկա—հետախուզություն, разведка
Ըռնդիկ—գեղեցիկ, սիրուն
Ըռուզգյար— ժամանակի շրջան
Ըստուլ—աթոռ, стул

**Թ**

Թաղի—բարակ
Թալանչի—կողոպտող
Թահր—տեսակ
Թամահ—ագահություն. ախորժակ
Թամըզ—մաքուր. ամբողջ
Թայ—համահավասար, հավասար
Թայֆա—խումբ
Թառլան—բազե
Թարազ—կշեռք
Թափուգ—աքացի, վոտքի հարված
Թեխ—դեպի
Թիրմա (շալ)—Քիրմանի շալ
Թիքա-Թիքա—պատառ-պատառ, կտոր-կտոր
Թոբա—քավ լիցի, բնավ
Թոհնաթ—նախատինք
Թովչի—հարկաբաշխում
Թորգել—թողնել
Թուլա—շան լակոտ
Թումբան—վարտիք

**Ի**

Իզ ը թող—հետք
Ինգլիզ—անգլիացի
Իշթար—ինչպես, ինչ կերպ, ինչ ձևով
Իրեսփոխ—յերեսփոխ
Իրիշկել—նայել, դիտել



**Լ**

Լաճ—տղա, արու զավակ
Լայող—վայել
Լաչառ—լիրբ, անզգամ
Լափ—բոլորովին, ամբողջապես
Լէլ—հեղեղատ, ցեխ
Լիխկայան—լիկկայան
Լհեր—վերմակ
Լոբրագ—պարծենկոտ
Լոթոած բերան—բերան բաց, մեջ ընկան

**Խ**

Խալարըզան—լուր տանող. մատնիչ
Խազար—հազար
Խաթուն—կին, տիկին
Խալիս—մաքուր. ազնիվ
Խալիվոր—ալևոր
Խամ—անփորձ, անվարժ
Խայաթ— բամբի թել
Խայիր—հարյուր
Խանդակ—վիհ, փոս
Խաս բաղչա—պարտեզ, ընտիր պարտեզ
Խավալ—ղահիրա
Խավարական—հավասար. հավասարություն
Խեյլի—բավականաչափ
Խըմաթքյար—ծառայող
Խոզան—ցորենի քաղված (հնձած) արտը
Խոշ—լավ. քաղցր. դուրեկան
Խոշա կառավաթ—մեծ մահճակալ, кровать
Խորոտ—գեղեցիկ
Խուզա—հուզա

**Ծ**

Ծեղ—ճյուղ

**Կ**

Կաժ—թելի կապ, կծիկ
Կամիշ—յեղեգն
Կայմուտ—պահարան
Կանավ—առու
Կաշանգ—գեղեցիկ, սիրուն
Կանցիլար—գրասենյակ, канцелярия

Կարթ—խաղաթուղթ, карты
Կաս—դրամարկղ, касса
Կեղտոտ փող—անբարոյական
Կլխվրել—գլխի վրա գալ, գլխկոնծի տալ
Կյատա—գաթա, կարկանդակ
Կնդել—խուզել
Կոյլոնուք—կոնյակ, коньяк
Կոշտ ու պլոշտ—կոպիտ, անճոռնի
Կոպերնատ—կոոպերատիվ
Կոռծ—գործ, աշխատանք
Կոտ—գանգ
Կոտոշ—պոզ, եղջյուր
Կուրտիկ—բաճկոն, куртка
Կուրտիշկա—տես՝ կուրտիկ
Կուրբան—մատաղ

Հ

Հագիր—պատրաստի
Համամ—բաղնիք
Հայա—պատիվ, ամոթխածություն
Հայիֆ—վրեժ
Հառեջ—առաջ
Հասանդ—հեշտ, դյուրին
Հասկյամի—նստարան, скамейка
Հավա—եղանակ, կլիմա
Հավայի—անտեղի, զուր
Հարամի—ավազակ, ուրիշի աշխատանքի արդյունքը վայելող
Հար դամ—ամեն անգամ
Հարիվ—տես՝ հայիվ
Հեմալ—ինչպես, ինչ կերպ
Հեյրան—մատաղ
Հեքյալ—վզից կախելու հմայիլ
Հյուրմաթ—պատիվ, հարգանք
Հորի—ինչի, ինչու համար
Հուշտ անել—հալածել, խրտնեցնել
Հուրյաթ—ազատություն

Ձ

Ձի—ինձ

Ղ

Ղաբուլ—ընդունելի



Ղալբ—կեղծ
Ղահրաման—հերոս
Ղամհար—օգնական
Ղամ-ղուսա—հոգս ու մտորմունք
Ղայա—ժայռ
Ղայդա—յեղանակ, ձև
Ղաշխա—սխալկավոր
Ղարաղ—վերջապես. թշնամանք
Ղեյրաթ—ջանասիրություն
Ղլավ—չար, գիրուկ
Ղոզա—բամբակի բացված կոկոնը
Ղաջ—քարքարուտ

Ճ

Ճան—վեգ
Ճավկոր—հավկուր
Ճիժ—յերեխա, մանուկ
Ճիլվել—թեքվել, հակվել
Ճոչ—մեծ, անագին. ավագ

Մ

Մազեթ—կուպր, мазут
Մազ կտրած—լիրբ
Մալ—հարստություն, ունեցվածք
Մախլուխ—ժողովուրդ, հասարակություն
Մահանա—պատրվակ
Մաղարա—այր
Մայիֆ—կույր. խեղճ
Մաշ—լոբու տեսակ
Մաշինա—մեքենա
Մարգա—կանաչեղենի տեսակ (ռեհանի համի)
Մարիֆաթ—շնորհք
Մաքյա—յեգիպտացորեն
Միլադ—խաղողի կախան
Մինա—թանկագին քար
Մինթանա—կանացի հնաձև շրջազգեստ
Միրզա—գրագիր
Մխտառ—զզվելի, արգահատելի, գարշելի
Մըկա—հիմա, այժմ
Մհալ—գավառ
Մոշա—անտառ
Մուշտարի—հաճախորդ

## Յ

Յաղ ու յաղ—ատար, կողմնակի
Յալանչի—խաբեբա
Յան—կողմ
Յաշմաղ—բերանակալ
Յարար—արդյոք
Յար ը յաթաղ—անկողին
Յեթիմ—որբ
Յենգի—նոր
Յեսիր—գերի
Յոլդաշ—ընկեր

## Ն

Նահլաթ—անեծք, նախատինք
Նամուսքյաշ—պատվազգաց
Նաչար—խեղճ, անճար, զրկված, աղքատ
Նասյաթ—կատակ
Նաֆար—ընտանիք, շունչ

## Շ

Շալլաղ—ջեմիշի վատ տեսակը
Շախկուլաթ—շոկոլադ, шоколад
Շամաթա—աղմուկ
Շայկա—խումբ, шайка
Շաշ տալ—մատնանշել, ցույց տալ
Շառքաղ—կավարար
Շառթ ը շառ—դատ ու վճիռ
Շենլիգ—հասարակություն
Շիվան—սուգ, լաց
Շիվար—մոլորված, անճար
Շհար—քաղաք
Շոշ—խճուղի
Շուխի—լավ, զվարթ, կենսախինդ

## Ո

Ոզգյա—ջոկ. հատուկ
Ոզուլ—տղա, ով տղա
Ողլուշաղ—կին, ընտանիք, գերդաստան
Ոյաղ—ոյեղ, արթուն
Ոնչուն—դրա համար, այդ իսկ պատճառով
Ոջաղ—ընտանիք, գերդաստան, տուն



Ուզևս ենք—ուզում ենք
Ումուդ—հույս, ապավեն
Ունձ—հունձ
Ուր—յուր, իրեն
Ուրբաթախոս—չխոսկան, լուռ ու մունջ

## Չ

Չաթու—թոկ, պարան
Չայդան—թեյաման, чайник
Չանգյալ—կեռ. պատառաքաղ
Չանթա—պայուսակ, տոպրակ
Չարխարեշ—շարխած
Չախուկ—շտապ, արագ
Չլաել—մերկացնել
Չխո—ինչպես
Չունքի—վորովհետև, քանի վոր
Չուրի—մինչև, մինչև վոր

## Պ

Պալ—ժայռ
Պախ—բահ
Պզող—հետք
Պծառ—պատառունց, մի քիչ
Պըջիկ—բջիջ
Պիյան—հարբեցող, пьяница
Պինդ ը պիյար—ամուր
Պուճուճակ—ծոծրակ
Պրախոդ—շոգենավ, пароход
Պրիկաշչիկ—գործակատար, приказчик

## Ջ

Ջեյրան—յեղնիկ
Ջեյրանո—տես՝ ջեյրան (փաղաքշականով)
Ջերգյա—շարք
Ջլավ—սանձ
Ջըռ—հաջողակ
Ջըհանդամ—դժոխք
Ջուխտ—զույգ
Ջուհար—գոհար
Ջուջու—հավի ճուտ
Ջուռա—տեսակ

## Ռ

Ռանչպար—յերկրագործ
Ռինդ—տես՝ ընդիկ

## Ս

Սաբաք—պատճառ, դրդապատճառ, առիթ
Սաբիբ—տես՝ սաբաք
Սաբր անել—սպասել, համբերել
Սաղ—վողջ, ամբողջ
Սաղմոց—սաղմոս
Սավայի—բացի, զատ, ջոկ
Սարսաղ—հիմար, ապուշ
Սաֆա—քեֆ, ուրախություն
Սել—սայլ. հեղեղ
Սթար լինել—տեղավորվել, հանգստանալ, զագըել
Սիթամ—աղետ, դժբախտություն
Սիմ—լար (աղեղի, յերաժշտական գործիքի և այլն)
Սկել—ընկղմվել լռել, պապանձվել
Սուգիա—դատավոր, судья
Սում—դրամագլուխ, сумма
Սֆաթ—դեմք, յերես

## Վ

Վաթան—հայրենիք, ծննդավայր
Վախլուկ—վախկոտ, յերկչոտ
Վախտ—ժամանակ
Վերանա—ավեր, անմարդաբնակ
Վեր ու գիր—նիստ ու կաց

## Տ

Տակետակ—խորամանկ
Տար անել—(հողը)—հողը խումբ անել
Տել—դեռ
Տեղք ը տեղ—տեղովը, ամբողջովին
Տերվանք—տերեր
Տկլոզ—տկլոր, մերկ
Տոլ—թեթևսոլիկ
Տրինգ—լրիվ

## Ց

Ցեպ—շղթա, цепь



## Փ

Փախչան—փախչող, խույս տվող
Փայա—գոմ
Փաչա—սրունք
Փարդա—վարագույր, քող
Փառ ու փառաշ—փառավոր
Փեյվաստ—պատվաստ
Փեշա—արհեստ
Փեշաքյար—արհեստավոր
Փոզղուն—ավերված, քանդված, քայքայված

## Ք

Քաղցու—քաղցից, սովից
Քաշքաշան—քաշքշոց, քաշքշուկ
Քարթու—հին, հնացած
Քավթառ—պառավ, ծերունի (արհամարհական իմաստով)
Քյաֆըր—ղաժան, անողորմ, թշնամի, վոսոխ
Քյաբաբ—խորոված
Քյամբխվել—դժբախտանալ, ավերվել
Քյանց—ինչպես, վոնց վոր
Քյասար—կարճ ճանապարհ, կտրած
Քյար անել—ոգտվել, շահել
Քելա—արի, գնա
Քյոլ—թուփ (բամբակի և այլն)
Քյոհնա—հին, վաղուցվա
Քյոմագ—ոգնական, ոգնություն
Քյոչ—քոչ
Քյուլաշ—հնձած հասկ
Քյուլլի—բոլոր, վողջ
Քըֆել—հայհոյել

## Ֆ

Ֆաղիր—չքավոր, խեղճ, աղքատ
Ֆրանգ—ֆրանսիացի
Ֆանդ ը ֆել—հնարք և խորամանկություն
Ֆրանգի—ֆրանսիական. ընտիր
Ֆարման—հրաման
Ֆաբրիկա—ֆաբրիկա, фабрика.

## ԲԱԺԻՆՆԵՐԻ ՑԱՆԿ


ԷՋ

1. ԱՌԱՋԱԲԱՆ . . . . . . . . . . . . . . . . . . . 5—6
2. ԼԵՆԻՆ . . . . . . . . . . . . . . . . . . 7—26
3. ՍՏԱԼԻՆ . . . . . . . . . . . . . . . . . . 27—48
4. ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՈՎՔ . . . . . . . . . . . . . 49—61
5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐ . . . . . . . . . . . 63—73
6. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ . . . . . . . . . . . 75—94
7. ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԿՅԱՆՔ . . . . . . . . . . . . . 95—109
8. ՆՈՐ ԿԵՆՑԱՂ . . . . . . . . . . . . . . . . 111—129
9. ԲԱՌԱՐԱՆ . . . . . . . . . . . . . . . . . 131—143


---


Գլավլիտի լիազոր Ն—3509. պատվեր—124. տիրաժ 3000
Արտադրության է հանձնված 1938 թ. փետրվարի 22-ին:
Ստորագրված է տպագրության 1938 թ. մարտի 31-ին:

ԳԻՆԸ 6 Ռ.

АРМЯНСКИЙ СОВЕТСКИЙ ФОЛЬКЛОР
Изд. Института Истории и Литературы Армянской ССР
Ереван — 1938

ՀՀ Ազգային գրադարան
NL0337627

37847